

ՆՈՒԹԱՐ ՉԱԼԵՄՅԱՆ

**Դիվանագիտական
վարչեցողության (էքիկայի)
կանոնները**

**Երևան
«Լոսարաց հրատարակատուն»
2009 թ.**

ՀՏԴ 17:327
ԳՄԴ 87.7 + 66.49
Չ 151

ԵՊՀ Գրադարան



SU0179684

Նվիրում եմ
ՄԻՐԵԼԻ ՄՈՐՄ ՇՎԱՐԹԻ
Վառ հիշատակին

Չալըմյան Նուրար

Չ 151 Դիվանագիտական վարչեցողության (Երևանի)
կանոնները. - Եր.: Լուսարաց, 2009. - 112 էջ:

«Դիվանագիտական վարչեցողության (Երևանի) կանոնները» գրքույկի մեջ ներկայացվում են դիվանագետի վարչեցողության ընդհանուր կանոնները:

Գրքույկը նախատեսված է սկսնակ դիվանագետների, միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև դիվանագիտական ծառայության և արտասահմանցի գողծներների հետ առնչվողների համար:

ԳՄԴ 87.7 + 66.49

Ն. Տ. Չալըմյան 2009թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Դիվանագիտական վարպետողության հերիկայի/ նորմերը մարդկանց միջև փոխհարաբերությունների երկարատև գործընթացի արդյունք են: Ինչպես հասարակական կյանքում, այնպես էլ դիվանագիտական բոլոր շփումների և պաշտոնական միջոցառումների ժամանակ անհրաժեշտ է պահպանել այդ նորմերը, որոնք իրենց հիմքում կրում են համընդհանուր բնույթ, քանի որ ներկայիս գոյություն ունեցող հասարակական-քաղաքական տարբեր հանակարգեր ունեցող պաշտոնական ներկայացուցիչները հետևում են դրանց: Խոսելիս Եթիկային հավատարին մնալու անհրաժեշտության մասին պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ յուրաքանչյուր ժողովուրդ, ելնելով իր ազգային ավանդույթներից

ու դարերից փոխանցված սովորույթներից, ինչպես նաև պատմական զարգացման առանձնահատկություններից, որոշակի լրացումներ է մտցրել ընդունված սկզբունքների մեջ: Այսպես, եթե Յին Դոռմից մեզ է հասել աղու հացի հյուրընկալման գեղեցիկ սովորութը, ապա սկանդինավյան ժողովուրդների վարքագծի մեջ ընդունելի է եղել առավել հարգելի հյուրերին ամենապատվավոր տեղերը հատկացնելու կարգը:

Դիվանագետի կողմից վարվեցողության նորմերի պահպանմանը մեծ նշանակություն է տրվում, քանի որ դրանց չհետևելը կամ խախտելը անկասկած ստվեր է գցելու տվյալ երկրի հեղինակության և նրա պաշտոնական ներկայացուցիչների վրա՝ ընդհուպ պետությունների փոխհարաբերություններում առաջացնելով բարդություններ:

Յետևելով եթիկայի հիմնական նորմերին՝ դիվանագետը ցույց է տալիս իր ներքին մշակույթը, քաղաքավարության աստիճանը և ինտելեկտուալ մակարդակը, որը չի կարող

աննկատ մնալ գործընկեր դիվանագետների կողմից, և այդ հատկանիշներին տիրապետելը կամա թե ակամա հեշտացնում է դիվանագետի գործը ինչպես արագ և արդյունավետ շփումներ ունենալու, այնպես էլ փոխըմբուման հասնելու և կայուն փոխհարաբերություններ հաստատելու համար:

Դիվանագիտական էթիկան դիվանագետի բարոյական վարքագժի, վարվեցողության կանոնների, հոգևոր սկզբունքների մասին գիտություն է, որով նա ղեկավարվում է իր առաջելության ողջ ընթացքում: Յուրաքանչյուր դիվանագետ իր անհատականությունը պետք է հաստատի՝ հետևելով համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին: Դիվանագիտական շրջանակում իրեն ճիշտ պահելու ունակությունը մեծ նշանակություն ունի: Այն նպաստում է շփումներ հաստատելու, փոխըմբուման հասնելու ընթացքին՝ ստեղծելով լավ, կայուն փոխհարաբերություններ: Իսկական դիվանագետը, հետևելով վարվեցողության համընդհանուր ճանաչում գտած նորմերին,

որի հիմքում բարյացակամությունն է և չափի գգացումը, չի կարող ունենալ երկակի ստանդարտի վարքագիծ. այն պետք է նույնը լինի և պաշտոնական միջոցառումների, ընդունելությունների և արարողությունների ժամանակ, և մերձավորների շրջապատում: Այսօր դիվանագիտական էթիկայի նորմերի ճիշտ իմացությունը դարձել է անհրաժեշտություն և առանձանահատուկ իմաստ ստացել միջազգային հաղորդակցության մեջ՝ նպաստելով դիվանագետի և պաշտոնատար անձանց ընդիանուր վարքագծի նակարդակի բարձրացմանը:

Սույն գրքույկը նպատակ ունի ներկայացնելու դիվանագետի վարվեցողության ընդհանուր կանոնները, որոնք հիմնված են միջազգային հաղորդակցության մեջ լայն ճանաչում գտած սկզբունքների վրա: Դրանց իմացությունը դրսենորվում է դիվանագետ գործընկերոջ հետ ժանոթանալու, տարբեր նակարդակների ընդունելությունների ժամանակ համապատասխան պահվածք ունենալու, սեղանի շուրջ սպասքից օգտվելու նրբություններին տիրա-

պետելու, իյուր գնաու և ընդունելու, դիվանագետ գործընկերոջ հետ հեռախոսով կապվելու, նվերներ փոխանակելու, պաշտոնական և ոչ պաշտոնական միջոցառումներին մասնակցելու ժամանակ:

Ներկայացվող աշխատանքի մեջ զետեղված խորհուրդները անհրաժեշտ են դիվանագիտական պրակտիկ գործունեության ընթացքում: Այդ խորհուրդներին հետևելիս երիտասարդ դիվանագետը զերծ կմնա իր ընտրած մասնագիտությանը անհարիր այնպիսի վարքագծից, ինչպիսիք են կոպտությունը, անտակտ ու անքաղաքավարի դրսևորումները:

Սույն գրքույկը կարող է օգտակար լինել և հետաքրքրել դիվանագիտական գործունեությամբ զբաղվող անձանց, մասնավորապես սկսնակ դիվանագետներին, պետական ապարատի աշխատողներին, ինչպես նաև միջազգային հարաբերությունների ֆակուլտետներում սովորող ուսանողներին որպես ուսումնական ձեռնարկ:

ԴԻՄԵԼԱԶԵՎԸ

Դայտնի է, որ դիվանագետը իր ծառայության ողջ ընթացքում բազմաթիվ հանդիպումներ է ունենում ինչպես արտաքին հարաբերությունների կենտրոնական մարմիններում, այնպես էլ արտերկրում իր ներկայացուցչությունում աշխատելիս: Դեսպանընկալ երկրում կազմակերպվող դիվանագիտական ընդունելությունների, զանազան հաղիսությունների, արարողությունների, իշխանության ներկայացուցիչների և ինչու չէ նաև մասնավոր շփումների ժամանակ դիվանագետը պարտավոր է հետևել դիմելածի եթիկայի կանոններին, որոնք ունեն համընդհանուր ճանաչում:

Միջազգային պրակտիկայում ընդունված է դիվանագիտական ներկայացուցչությունների դեկավարներին, պետությունների նախա-

գահներին, պետական, քաղաքական և կրոնական առաջնորդներին ու հայտնի գործիչներին դիմել ըստ նրանց զբաղեցրած դիրքի:

Բոլոր երկրներում դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին ընդունված է դիմել «Պարոն դեսպան» դիմելածեով։ Այն՝ որպես հարգանքի դրսեորում, պահպանվում է ցմահ։ Ծառայողական պարտականությունները կատարելիս դեսպաններին դիմում են «Զերդ գերազանցություն» ձևով, որը դիվանագիտական պրակտիկայում շրջանառվում է նաև պաշտոնական նամակով դիմելիս կամ հրավերներ ուղարկելիս։ Նման դիմելածեը տարածվում է նաև նրանց կանանց նկատմամբ։ Դեսպանի կնոջը դիմում են «տիկին» կամ «մադամ» և կամ ամուսնու ազգանունով՝ համաձայն դիմելածեի կանոնների։ Հարգանքի «պարոն» դիմելածեը կիրառվում է նաև լիազոր նախարարների ու առաքելությունների ղեկավարներին դիմելիս։

Պաշտոնական բոլոր ընդունելությունների և հանդիպումների ժամանակ՝ պետությունների ղեկավարներին, վարչապետներին, նախարար-

Ներին, բարձրաստիճան քաղաքական գործիչ-ներին ներկայացնելիս, նշվում են նրանց տիտղոսները: Տիտղոսներով դիմում են նաև պետական ապարատի բարձրաստիճանավորներին, կառավարության անդամներին, խորհրդարանի խոսնակին և նրա տեղակալներին:

Պետության ղեկավարին ընդունված է դիմել «պարոն նախագահ», տիկնոջը՝ «տիկին» /ազգանունը/, իսկ վարչապետին՝ «պարոն վարչապետին» ձևով:

Միապետական կարգ ունեցող Երկրներում ընդունված է տարբեր տիտղոսներով դիմելածել: Օրինակ, միապետին պետք է դիմել «Զերդ մեծություն» /Your Majesty/ կամ «պարոն», իսկ թագուհուն՝ «Զերդ մեծություն» կամ «տիկին» ձևով: Իշխանուհիներին դիմում են «Զերդ թագավորական մեծություն» ձևով:

Եվրոպական Երկրներում, որտեղ պահպանված են ազնվական տիտղոսները, դիմելածեկին առանձնահատուկ ուշադրություն են դարձնում: Ներկայումս ընդունված հիմնական տիտղոսները հինգն են՝ իշխանը, իերօնդը, մարկիզը, կոմսը և դերկոմսը /վիկոնտը/, որոնք

սովորաբար փոխանցվում են տղամարդու կողմից առաջին տիտղոսակիր բոլոր ժառանգներին, այսինքն ընտանիքի գլխավորից ավագ որդուն: Արիստոկրատական ընտանիքներում ևս կիրառվում է տիտղոսներով դիմելածելը: Օրինակ, Բարոն /և ազգանունը/, «Սըր» /անուն-ազգանուն/: Հերցոգների և մարկիզների կրտսեր որդիները կրում են «Լորդ» տիտղոսը: Այն դրվում է նրանց անունից ու ազգանունից առաջ, իսկ կոմսների կրտսեր որդիները և բարոնների բոլոր որդիները ստանում են «Պատվելի» /Honorable/ տիտղոսը:

Մեծ Բրիտանիայում ազնվական ընտանիքների կանայք ևս ստանում են համապատասխան տիտղոսներ: Այսպես, ազնվական տիտղոսներ են կրում հերցոգների, մարկիզների և կոմսների դուստրերը: Նրանց դիմելիս ընդունված է «Լեդի» անվանումը, որը դրվում է անուն-ազգանունից առաջ:

Ըստ եթիկայի նորմերի՝ միջազգային պրակտիկայում ընդունված է բարձրաստիճան հոգևորականներին տիտղոսներով դիմելածելը: Այսպես, քրիստոնեության մեջ տարբեր հա-

րանվանությունների ներկայացուցիչների մոտ ընդունված են տարբեր տիտղոսներ: Օրինակ, հայ առաքելական եկեղեցու առաջնորդ Ամենայն հայոց կաթողիկոսին դիմելիս կիրառվում է «Վեհափառ Տեր», իսկ արքեպիսկոպոսներին և եպիսկոպոսներին դիմում են «Սրբազն հայր» կամ «Զերդ սրբազնություն», պատրիարքին՝ «Զերդ սրբություն» ձևով:

Կաթողիկե եկեղեցու բարձրագույն ներկայացուցիչը՝ Հռոմի պապը, ունի «Զերդ սրբություն» կամ «Հայր սուրբ» տիտղոսը, իսկ կարդինալները՝ «Զերդ Սրբազնություն» դիմելածնը, կաթողիկե արքեպիսկոպոսները՝ «Զերդ պայծառափայլություն» կամ «Զերդ գերազանցություն» տիտղոսները: Ավետարանշական եկեղեցու ներկայացուցիչները, ունեն տիտղոսների օգտագործման իրենց առանձնահատկությունները: Այսպես, անգլիական եկեղեցու արքեպիսկոպոսին դիմում են «Զերդ ողորմածություն», իսկ եպիսկոպոսին՝ «Լորդ» տիտղոսներով:

«Զրույց վարելու հմտությունը շնորհը է»:

Սպիևակ

«Լավ զրուցակից դառնալու միայն մեկ

միջոց կա՝ կարողանալ լսել»:

և Մռովի

ԽՈՍԵԼՈՒ ԵՎ ԼՍԵԼՈՒ ԷՇԻԿԱՆ

Տվյալ դիվանագետի փորձն ու հմտությունը, զրույց վարելու մշակույթը, զրուցակցի նկատմամբ հարգանք տածելը և քաղաքավարության աստիճանը երևում են դիվանագիտական շփումների ժամանակ։ Սկսնակ թե փորձված դիվանագետը իր դիվանագիտական ծառայության ողջ ժամանակահատվածում միշտ պետք է հաշվի առնի այս նորմերը։ Ընդունված է, որ դիվանագետը նախ պետք է նկատի ունե-

նա ինչպես գրուցակցի տարիքը, այնպես էլ նրա դիվանագիտական աստիճանը, գրաղեցրած պաշտոնը ու ծառայողական դիրքը և ըստ այդմ վարի գրուցը: Հատ կարևոր է ծայնի և խոսելու տոնի վրա ուշադրություն դարձնե՛ը, քանի որ դրանով են բնորոշվում անծի նկարագիրը և քաղաքավարության աստիճանը:

Դիվանագետները միմյանց հետ շփվելիս նախ պետք է կատարեն թեմայի ճիշտ ընտրություն, որպեսզի նրանց գրուցը լինի արդյունավետ, իսկ թեմայի ընտրությունը կախված է շփողների միջև առկա հարաբերության աստիճանից, ինչպես նաև տվյալ իրավիճակից, շահերից ու ժամանակից: Ընդհանրապես գրուցի ժամանակ ցանկալի է չխոսել այնպիսի թեմաներից, որոնք գրուցակցին կարող են հաճելի չլինել: Դարկավոր է զերծ մնալ գրուցակցին անհարկի հարցեր ուղղելուց, խուսափել նրան ոչ հաճելի թեմայի մասին խոսելուց: Հատ կարևոր է խոսելիս ուշադրությունը չկենտրոնացնել անծնական խնդիրների վրա և չգայթակղվել ինքնագովերգմանք: Եթիկայի

նորմերի դեմ են ուրիշների խնդիրների քննարկելը և առավել ևս նրանց վարչագծի դատապարտելը։ Զրուցակցի նկատմամբ պետք է լինել առավելագույն հարգանքի սահմաններում, ուշադիր լսել նրա կարծիքը, խոսելիս նրան չընդիատել նույնիսկ այն ժամանակ, երբ նրա արտահայտած կարծիքը չի համընկնում ընդհանուրի կամ Չեր անձնական կարծիքին։ Պետք է զրուցակցին համբերատար լսել և մինչև նրա խոսքի ավարտը հարգալից վերաբերմունք ունենալ նրա նկատմամբ։ Այս կապակցությամբ հայերիս մոտ շատ հաճախ ընդունված «խոսքի շաքարով կտրեմ» արտահայտությունը ընդունելի չէ դիվանագիտական եթիկայում և դուրս է խոսելու և լսելու քաղաքարության շրջանակներից։ Զրուցակցի հետ շփվելիս պետք է նկատի ունենալ տվյալ հարցի շուրջ նրա իրավասու լինելը։

Զրուցակիցների միջև հետագա մերձեցման կարևոր պայմաններից մեկը հավաստի տեղեկատվության փոխանակումն է։ Բարձրածայն խոսելը դիվանագետի համար անընդու-

Աելի է. այն կարող է շրջապատող մարդկանց ուշադրությունը գրավել զրուցակիցներից մեկի վրա: Խորհուրդ է տրվում երբեք չխոսել արագ, պահպանելով բանավոր խոսքի նորմերը, խոսել հանգիստ ծայնով, հստակ ձևակերպել միտքը և ունենալ ծայնի լավ առօգանություն և ճիշտ շեշտադրում: Լավ զրուցակիցը իր խոսքի մեջ բառեր փնտրելու կարիք չունի: Նա պետք է խույս տա երկարաշունչ նախադասություններ արտաքերելուց:

Դիվանագիտական պրակտիկայում սովորաբար, երբ զանազան միջոցառումների ընթացքում հավաքված են լինում անձինք, միաժամանակ տարբեր դիվանագիտական ներկայացուցությունների դեկավարներ և դեսպաններ երկրի պաշտոնատար անձինք, ընդունված է չեզոք թեմա ընտրել զրույցի համար, այսինքն զրույց վարել այնպիսի նյութի շուրջ, որը ընդունելի է բոլոր ներկաների համար: Նման միջոցառումների ժամանակ անհրաժեշտ է խուսափել նեղ անձնական, ընտանեկան կամ մասնագիտական թեմաներ շոշա-

փելուց: Դետևաբար ցանկալի է ընտրել մի այնպիսի նյութ, որը հետաքրքրություն կառաջացնի բոլոր ներկաների մոտ:

Խոսելու և լսելու երիկայի նորմերի համաձայն՝ տրված հարցին պետք է անպայման պատասխանել: Սակայն, շատ հաճախ պատահում է, երբ տրված հարցի պատասխանը պահանջում է զգուշավորություն. այդ դեպքում պատասխանող կողմը իր ունեցած փորձով ու հմտությամբ կարող է նրբանկատ մաներել՝ չմոռանալով նույնիսկ այդ պահին հարգանք դրսենորել զրուցակցի նկատմամբ:

Անդրադառնալով խոսելու և լսելու երիկայի բնորոշ առանձնահատկություններին՝ նշենք մեկ այլ կարևոր հանգամանք ևս. ընդհանուր միջոցառումների ժամանակ ներկաների մոտ ուրախ տրամադրություն ստեղծելու ցանկություն առաջանալու դեպքում պետք է ուշադիր լինել կատակելիս. որպեսզի այն հանկարծ որևէ մեկին չվիրավորի, այլ ընդունվի պատշաճ ծեռվ: Օրինակ, ասիացիների՝ չհնացիների կամ ճապոնացիների հետ զրուցե-

լիս պետք է խուսափել նյութի շուրջ կատակ-ներ անելուց, քանի որ դրանք կարող են հա-կառակ անդրադարձ ունենալ:

Ըստ խոսելու կամ լսելու եթիկայի՝ որ եթե ինչ-որ բան թվում է անհասկանալի, և կարիք է զգացվում պարզություն մտցնելու արտահայ-տած մտքի մեջ, ապա ընդունված է օգտագոր-ծել «Ներեցեք, ես չլսեցի» կամ «Ներեցեք, ես չհասկացա» արտահայտությունները։ Զրու-ցակցի մոտ վատ տպավորություն թողնելու նշան է «Ի՞նչ» հարցով նրան պատասխանելը։ Խորհուրդ է տրվում խոսելիս երբեք հեգնան-քով չժպտալ, չնայել ընդգծված և խիստ հա-յացքով, չվիճաբանել ու չօգտագործել «Դուք սիսալվում եք» բառակապակցությունը։ Դիվա-նագետները պետք է զրուցակցին մինչև վերջ լսելու ունակություն ունենան, պետք է միշտ ուշադիր լսեն դիմացինի կարծիքը. Խոսելիս նրան չմիջամտեն, սակայն ելնելով զրուցակ-ցին ընդհատելու անհրաժեշտությունից՝ կարե-լի է շատ քաղաքավարի ասել «Ներեցեք, կա-րող եմ ավելացնել, որ...»։ Այս դեպքում քաղա-

քավարությունը պահանջում է, որ խոսողն ընդհատի իր խոսքը և թույլ տա մյուս կողմին արտահայտվելու:

Պարտադիր է գրուցակցի նկատմամբ առավելագույն ուշադրության և փոխադարձ հարգանքի դրսնորումը: Դիվանագետը գրուցի ընթացքում իրավունք չունի օգտագործելու եթիկայի նորմերին դեմ այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Դուք ճիշտ չեք», «Դուք հավանաբար լավ չեք հասկացել», «Սա պարզից էլ պարզ է», «Սա բոլորին էլ հայտնի է», «Չի կարող պատահել», «Դուք վստա՞հ եք» և այլն:

Իհարկե, երբ գրուցակցի խոսքը ուղղելու անհարժեշտության կարիք կա, ապա քաղաքավարությունը նման դեպքերում այսպես է թելադրում. «Ներեցեք, թույլ տվեք Ձեզ հետ չիամածայնել» կամ «Ինձ թվում է, որ Դուք ճիշտ տեղեկացված չեք»:

Հարկավոր է նկատի ունենալ, որ գրուցակից դիվանագետները չպետք է իրար շատ մոտ նստեն և ոչ էլ իրարից շատ հեռու: Ըստ գոյութ-

յուն ունեցող ընդունված տեսակետի՝ եթե գրուցակիցները բավականին հեռու են նստած իրարից, ապա նրանց միջև շփումը կորչում է, և հակառակը, եթե շատ մոտ են նստած, ապա առաջանում է անհարմարության զգացողություն: Օրինակ՝ ամերիկացիների համար մոտ տարածություն է համարվում մինչև մեկ մետր քսան սանտիմետրը, իսկ հեռու տարածությունը՝ մինչև երեք մետր և ավելին: Եվրոպացիների համար ընդունված է գրուցել մինչև մեկ մետր տարածության վրա: Իտալացիները նախընտրում են գրուցել մոտ տարածությունից և հաճախ նաև բարձրածայն:

Խոսելիս կամ լսելիս փորձված ու հմուտ դիվանագետը ունակ է շուտ կոահելու իր գրուցակցի կարողության աստիճանը, նրա ունեցած տրամադրությունը: Հաճելի գրուցակիցների մոտ երեք չի զգացվում հոգնածություն, և միշտ կրկին հանդիպելու ցանկություն է առաջանում:

ՀԵՏԵՎԵԼ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՅԻ ԷԹԻԿԱՑԻՆ

Յեռախոսը՝ որպես հաղորդակցման միջոց, արդեն 130 տարի է, ինչ մտել է ինչպես մեր ամենօրյա, այնպես էլ դիվանագիտական կյանք։ Այն հնարավորություն է տալիս առավելագույնս արագ լուծելու շատ կարևոր հարցեր և հաստատելու անհետաձգելի և անհրաժեշտ կապեր։

Դիվանագիտական ծառայության մեջ ընդգրկված աշխատակիցների շրջանում կարող են լինել մարդիկ, որոնք, անտեղյակ լինելով երիկայի նորմերին, խախտում են դրանք՝ նույնիսկ ուշադրություն չդարձնելով իրենց խոսքի ինտոնացիայի և տոնի կարևորությանը։ Բնականաբար, հեռախոսով զրուցելիս երիկայի խախտումը կարող է վնասել ինչպես տվյալ

անծի, այնպես էլ դիվանագիտական ներկայացուցչության հեղինակությանը։ Դետուաբար հեռախոսազրույց ունենալիս պետք է ըստ արժանվույն նախապատրաստվել դրան։ Նախ և առաջ հարկավոր է վստահ լինել, որ զանգը չի անհանգստացնի զրուցակցին և այն որքանո՞վ կարող է օգտակար լինել զանգողին։ Դիվանագիտական ներկայացուցչության քարտուղարի կամ օգնականի հետ հեռախոսազրույցի ժամանակ, շատ կարևոր է ունենալ պատշաճ պահվածք և վարքագիծ ինչպես զրուցի սկզբում, այնպես էլ ավարտին, քանի որ խոսքը վերաբերում է ինչպես ներկայացուցչության ղեկավարի, այնպես էլ նրա ղեկավարած հաստատության հեղինակությանը։ Խորհուրդ է տրվում ներկայացուցչության ղեկավարին երբեմն զանգահարել իր օգնականին կամ քարտուղարին ստուգելու և համոզելու համար, թե որքանով է վերջինս քաղաքավարի և բարյացակամ շփման մեջ նտած անձնավորության հետ։ Քարտուղարը կամ օգնականը պարտավոր է քաղաքավարի տոնով ներկայանալ՝ նախ նշելով ներկայացուցչության անվանումը,

ապա գրուցակցի խնդրանքին ի պատասխան՝ հայտնել իր ղեկավարի անունն ու ազգանունը, հեռախոսահամարը /անհրաժեշտության դեպքում/ և ճիշտ գրելածնը։ Չպետք է զլանալ, եթե հարկ է լինում երկրորդ անգամ կրկնելու վերոհիշյալ տվյալները։

Քանի որ հեռախոսագրույցի ժամանակ տեսողական շփումը բացակայում է, և հնարավոր չէ տեսնել զրուցակցի ռեակցիան, նրա դեմքի արտահայտությունը, ապա հարկավոր է լինել առավել քաղաքավարի ու նրբանկատ և չմոռանալ, որ հեռախոսով գրուցելիս պետք է խուսափել այնպիսի բառեր օգտագործելուց, ինչպիսք են «չգիտեմ» կամ «այստեղ ոչ ոք չկա»։ Ներկայացուցչության քարտուղարը, նույնիսկ եթե իրեն ուղղված հարցի պատասխանը հնարակ տալ չի կարող, ապա բավարարելու համար գրուցակցի խնդրանքը պետք է պատասխանի հետևյալ կերպ. «Ավելի ուշ զանգեք, խնդրեմ», «Ես դա կճշտեմ», «Կներեք, այժմ պարոն դեսպանը հանդիպման է» և այլն։

Ներկայացուցչության դեկավարի կամ բարձրաստիճան դիվանագետի բնակարան զանգահարել կարելի է առավոտյան ոչ շուտ ժ. 8:30 և ոչ ուշ ժ. 22:30, իսկ հանգստյան օրերին ընդհանրապես էթիկային դեմ է զանգահարել առավոտյան ժ. 10:00-ից շուտ: Սակայն հանգամանքների բերումով, երբ անհետաձգելի և հույժ կարևոր տեղեկատվություն կա փոխանցելու դեկավարությանը, կարելի է զանգահարել թեկուզ ուշ ժամի, սակայն 5-6 զանգերին չպատասխանուզուց հետո պետք է հեռախոսափողը կախել և այլա չանհանգստացնել:

Զրույցի թեման երկար լինելու պարագայում քաղաքավարությունը պահանջում է հարցնել զրուցակցին՝ նա արդյոք հնարավորություն ունի տվյալ պահին խոսելու, թե՝ ոչ՝ հարցնելով. «Զեզ չե՞ն խանգարում կամ չե՞ն կտրում կարևոր գործից»: Եթե հարմար չէ այդ պահին զրուցել, ապա կարելի է պատասխանել. «Այժմ իյուր ունեմ և ցանկալի կլինի կապվել ավելի ուշ» և կամ «Երբ ազատվեք, խնդրեմ Դուք զանգահարեք»: Պետք է իիշել,

որ հեռախոսափողը առաջինը կախում է զանգողը:

Զանգահարելուց առաջ պետք է հստակ իմանաք Ձեր ուղղելիք հարցը, ի՞նչ պետք է հայտնեք և ի՞նչ պատասխան պետք է ստանաք և աշխատեք զրույցը վարել հնարավորինս կարճ: Անհրաժեշտ է նաև ծեռքի տակ ունենալ թուղթ, գրիչ, օրացույց և հեռախոսագիրք: Երբ խոսելիս ծայնը լավ չի լսվում, կարելի է զրուցակցին ասել. «Կներեք, Ձեզ լավ չեմ լսում, կարող եք մեկ անգամ ևս զանգահարել»:

Ժամանակակից տեխնիկան թույլ է տալիս Ձեր բացակայության ժամանակ կիրառել ինքնապատասխանող սարքը և ելնելով հրատապ տեղեկություն վիխանցելու անհրաժեշտությունից՝ կարելի է հաղորդել այդ մասին՝ նշելով զանգելու ժամանակը:

Հեռախոսազանգից հետո հարկավոր է շնորհակալություն հայտնել տեղեկատվության ստացման, հրավերի կամ առաջարկության համար: Գիշերային հեռախոսազանգերի ժա-

մանակ ընդունված է ասել. «Ներեցեք ուշ ժամի համար», «Ներեցեք երկար խոսակցության համար»: Նույն միտքը ընդունված չէ մի քանի անգամ կրկնելը: Եթե զանգահարում են այն ժամանակ, երբ Դուք խոսում եք մյուս զօնվ, և զանգողը բարձրաստիճան պաշտոնյա է, ապա հարկավոր է զրուցակցին ներողություն խնդրել Չեր զբաղվածության համար և անհապաղ կապվել կարևոր պաշտոնյայի հետ: Եթե կապն ընդհատվում է, ապա կրկին զանգում է առաջին զանգահարողը:

Բջջային հեռախոսներից օգտվելիս պետք է պահպանել էրիկայի նորմերը: Այսպես, խորհուրդ չի տրվում բջջային հեռախոս օգտագործել եկեղեցիներում, թատրոններում, թանգարաններում, համերգասրահներում, կինոթարոններում, ինչպես նաև դեսպանատներում և այլ հասարակական վայրերում: Կարևորն այն է, որ զրուցակիցների խոսակցության բովանդակությունը մատչելի չլինի շրջապատին և չխանգարի ներկաներին: Վերոհիշյալ վայրերը մտնելուց առաջ խորհուրդ է տրվում անջատել

հեռախոսը կամ ծայնը՝ անհրաժեշտության դեպքում թողնելով այն տատանման ազդանշանի վրա:

Փորձված դիվանագետները արգելում են իրենց երեխաներին վերցնելու հեռախոսափողը բնակարանում, քանի որ զանգահարողը կարող է երկար ժամանակ կորցնել՝ բացատրելով երեխային իր ով լինելը և զանգելու պատճառները:

Ընդունված չէ հեռախոսով ցավակցել մոտ անծնավորությանը, այլ պետք է գնալ նրա մոտ և անձամբ ցավակցել կամ հեռագիր ուղարկել:

Խորհուրդ է տրվում հեռախոսով խոսելիս օգտագործել հետևյալ բառերը՝ «կներեք», «ասացեք խնդրեմ», «բարի եղեք» և այլն:

ԻՆՉ Ե ԱՅՑԵՔԱՐՏԸ ԴԻՎԱՆԱԳԵՏԻ ՀԱՄԱՐ

Դիվանագիտական այցեքարտերը լայն տարածում ունեն արտաքին գերատեսչության աշխատակիցների գործունեության մեջ։ Դրանք հիմնականում կիրառվում են դիվանագետի կողմից գործնական և անծնական շփումների ժամանակ, ինչպես կենտրոնական ապարատում, այնպես էլ արտերկրում՝ դիվանագիտական ներկայացուցչությունում աշխատանքի ընթացքում։ Այցեքարտերի շնորհիվ է դիվանագետը կարողանում ծանոթություն հաստատել և ներկայանալ իր զրուցակցին, կապ պահպանել երկրի տարբեր գերատեսչությունների, նախարարությունների և շրջանակների հետ, շնորհավորել այս կամ այն

իրադարձության, տոնի առթիվ, շնորհակալություն հայտնել կամ նվերներ փոխանակել:

Դիվանագիտական պրակտիկայում ընդունված է այցեքարտերի վրա օգտագործել տարբեր խորհրդանիշներ, որոնք նշվում են ներքեւ ծախ անկյունում և գրվում են ֆրանսերեն նշանակությամբ լատինատառ հապավումներով:

Դրանք են՝

P.R./pour remercier/ – շնորհակալություն հայտնելիս,

P.F./pour feter/ – տոնի կապակցությամբ շնորհավորելիս,

P.F.C./pour faire connaissance/ – ծանոթության առթիվ գոհունակություն հայտնելիս,

P.P.C./pour prendre cong/ – վերջնական մեկնումից առաջ հրաժեշտ տալիս,

P.C./pour condoleances/ – ցավակցություն հայտնելիս,

P.P./pour presentation / – ներկայանալիս,

P.F.N.A /pour feter le Nouvel An /- ամա-
նորյա շնորհավորանքներ իայտնելիս,

*P.R.F.N.A./pour remerier pour feter le Nouvel
An/-* շնորհակալություն և ամանորյա
շնորհավորանքներ իայտնելիս:

Այցեքարտեր պետք է ունենան դիվանա-
գիտական ներկայացուցչության բոլոր աշխա-
տակիցները՝ սկսած դեսպանից, մինչև կցորդ:
Բազմաթիվ երկրներում ընդունված է, որ նոր
ժամանող դիվանագետն առաջինն ինքն այցե-
լի կամ ուղարկի իր այցեքարտն այն անձին,
ում իետ կապեր հաստատելու ցանկություն ու-
նի: Այցեքարտերը բազմազան են լինում և ու-
նեն իրենց առանձնահատկությունները: Դիվա-
նագիտական ներկայացուցչության դեկավարի
այցեքարտի վրա տպագրվում է միայն իր ա-
նունը, ազգանունը և պաշտոնը, իսկ ներքեփ
աջ անկյունում նրա նստավայր քաղաքի ան-
վանումը: Սովորաբար չեն նշվում հեռախոսի
համարները, ծառայողական կամ բնակարանի
հասցեները: Նստավայր երկրում ընտանիքի

հետ գտնվող դիվանագետին առաջարկվում է 4 տեսակի այցեքարտ.

1. Պաշտոնական այցեքարտ, որի վերևի մասում նշվում է ներկայացվող պետության անվանումը դեսպանընկալ երկրում, ապա դեսպանի ազգանունը, անունը, դիվանագիտական աստիճանը, հասցեն, հեռախոսահամարները /Փաքս և էլեկտրոնային հասցեն/: Դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներն ունեն պաշտոնական այցեքարտերի երկու տեսակ. առաջինի վրա նշվում է նրա ամբողջական տիտղոսը, իսկ երկրորդի վրա՝ ուղղակի «դեսպան» կամ «նախարար»:
2. Ոչ պաշտոնական նպատակների համար օգտագործվող այցեքարտ, ուր նշվում է միայն ազգանունը, անունը և հայրանունը:

3. Այցեքարտ, որի վրա նշվում է դիվանագետի կնոջ ազգանունը, անունը, հայրանունը:
4. Դամատեղ այցեքարտ ամուսինների համար՝ «պրն և տիկ...», ուր նշվում է նաև հասցեն: Անուն - ազգանունը երբեք կրօնատ չեն գրվում:

Տարբեր երկրներում այցեքարտերի օգտագործման հետ կապված կան որոշակի առանձնահատկություններ: Այսպես, ԱՄՆ-ում ամուսինների համատեղ այցեքարտի վրա նշվում է հասցեն, նույնը՝ չամուսնացած կանաց և տղամարդկանց պարագայում: Անունացած տղամարդու այցեքարտի վրա չի նշվում հասցեն, որովհետև այն պետք է նշվի կնոջ այցեքարտի հետ:

Բարձրաստիճան որոշ պաշտոնատար անձանց այցեքարտերը շատ համեստ են լինում. դրանց վրա նշվում է միայն տիտղոսը՝ առանց անունը և հասցեն հիշատակելու: Այդպի-

սին են «ԱԱՆ նախագահի, փոխնախագահի, արդարադատության նախարարի, ներկայացուցչական պալատի նախագահի, դեսպանների, նախարարների կամ փոխնախարարների այցեքարտերը»:

Սովորաբար հասցեատիրոջն ուղարկված այցեքարտը հավասարազոր է այցելության, սակայն ավելի նպատակահարմար է այն անձանբ հանձնել: Այցեքարտերին ընդունված է պատասխանել ստանալու պահից սկսած՝ մեկ օրվա ընթացքում:

Այցեքարտերը պետք է պատրաստված լինեն բարձրորակ թղթից և ունենան ընդունված նորմերին համապատասխան չափեր, տղամարդկանց համար՝ 90x50 մմ, իսկ կանանց համար՝ 80x40 մմ: Նախընտրելի է, որ այցեքարտերը գրվեն այն լեզվով, որն ավելի մատչելի է դեսպանընկալ երկրում:

Ոիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի պաշտոնական այցեքարտի նմուշներ:



ПОСОЛЬСТВО РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ПАВЛОВ

Николай Викторович

Чрезвычайный и Полномочный Посол

Республика Армения,
г. Ереван 0015
ул. Г. Гусаковского, 23а

Тел.: 56 25 21

Факс: 56 71 97

e-mail: info@rusemb.am



Embassy of the United States of America

Philip B. Gale

Second Secretary

1 American Avenue
Yerevan 375082,
Republic of Armenia

Ext.: (374 10) 48 48 01 (ext. 4881)
Fax: (374 10) 48 47 42
E-mail: galeph@state.gov

«Քաղաքավարությունը և համեսդությունը վկայուան մարդու իրական կրթվածության մասին»:
Օ. Բալզակ

ԲԱՐԵՎԵԼ՝ ԷԹԻԿԱՅԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՍՏԱՏԱՄԱՆԱՆ

Բարենելը բարի կամեցողության արտահայտություն է: Ժամանակակից էթիկան թելադրում է բարենել բոլոր ծանոթ և նույնիսկ անծանոթ մարդկանց՝ ցույց տալով ծեր շփվելու միտումը և ծանոթությունը շարունակելու ցանկությունը:

Տարբեր ազգեր ունեմ բարենելու իրենց ազգային առանձնահատկությունները: Այսպես, օրինակ ոռւսների մոտ ընդունված չէ վերելակում անծանոթ մարդկանց բարենելը, իսկ եվրոպացիների մոտ և մասնավորապես մեր-

ծավորարևելյան ժողովուրդներին բնորոշ է բարևել բոլորին: Ծատերի մոտ ընդունված չէ փողոցում ինչ-որ բան հարցնելու ժամանակ մեկին մոտենալիս բարևել /հայերի կամ ռուսների մոտ/: Առանց բարևելու նրանք միայն հարցնում են. «Ներեցեք այս փողոցի անվանումը ի՞նչ է» կամ սկսում են ուղղակի այսպես. «Ասացեք խնդրեմ...»: Պետք է բոլորի համար ընդունելի լինի նախ բարևելը, չէ՞ որ քաղաքավարությունը սկսվում է հենց այստեղից: Թող զարմանալի չքվա, որ գյուղական բնակչության մոտ ընդունված է բոլոր անծանոթներին բարևելը. դրանով իսկ նրանք արտահայտում են իրենց բարեկամեցողությունը: Դաճախ մարդիկ ողջունում են միմյանց գլխի թերև շարժումով, խոնարհումով և կամ ծեռքսեղման միջոցով: Ուսւները, օրինակ, միմյանց ողջունում են «Здравствуйте» «Как здоровье» ինչպես է առողջությունը/ ձևով: Արաբների մոտ ընդունված է «Աս սալամ ալեյքում» /խաղաղությունը ծեզ հետ/, հայերի մոտ՝ «Բարև Ձեզ», հրեաները հանդիպելիս միմյանց

ասում են՝ «Խաղաղություն Զեզ», հնդիկների մոտ ընդունված է՝ «Ամեն ինչ լավ է» և այլն: Ողջունի ընտրությունը կարող է կախված լինել տարիքից: Օրինակ, ոռուս երիտասարդների մոտ ընդունված է ողջունել միմյանց «որսւեմ» /ողջուն/ ձևով, իսկ տղանարդիկ իրենց ամենօրյա շփման ժամանակ նախընտրում են ողջունել “զծօրօօ” տարբերակով, որը կոպիտ է հնչում, և այն չեն օգտագործում կանայք:

Դիվանագիտական էթիկան պահանջում է բարևելու պաշտոնական ձևը՝ «Թույլ տվեք Զեզ ողջունել», «Բարև Զեզ», իսկ կախված օրվա ժամանակից՝ «Բարի լուս», «Բարի կեսօր», «Բարի երեկո», «Բարի գիշեր» /իրաժեշտի ժամանակ/:

Բարեկալիս կամ զրուցելիս ընդունված է նայել միմյանց աչքերին, քանի որ աչքերի միջոցով Դուք կարող եք նկատել Զեր նկատմամբ զրուցակցի ունեցած վերաբերմունքը բարեկամական կամ թռուցիկ հայացքի նիշոցով: Դայացքն արտահայտում է մարդու ներաշխարհը. Դուք բարի հայացքով եք ողջունում, իսկ զրու-

ցակիցը Զեզ պատասխանում է խոժոռ հայացքով: Ընդունված է, որ մոտ հարաբերություններ ունեցողները միմյանց ջերմ են բարևում, և այդ ջերմության մեջ էլ առկա են զգացմունքայնությունը և բարիկամեցողությունը: Իսկ անծանոթին բարևում են զուսպ: Երբեք չի խրախուսվում հուզումնալից ողջույնի ձևը, քանի որ այն կարող է կողմնակի մարդկանց ուշադրությունը գրավել: Ընդունված չէ շրջապատող մարդկանց բարևել մռայլ և խոժոռ հայացքով:

Ինչպես նշեցինք վերևում, ողջունելու ձևերից է նաև ձեռքսեղմումը, որը ցանկալի տարր է, բայց ոչ պարտադիր: Դիվանագիտական էթիկայում այն շատ կարևոր ժեստ է, որը օգտագործվում է ինչպես հանդիպման, այնպես էլ ծանոթության և հրաժեշտի ժամանակ: Եթե որոշել եք Զեր ձեռքը մեկնել, ապա այն պետք է պարզել բավականությամբ, այլ ոչ ծեական կամ իմիջիայլոց: Նարկավոր է հիշել, որ ձեռքը չեն սեղմում ամբողջ ուժով:

Տարիներ առաջ, տողերիս հեղինակը երջանկահիշատակ Ամենայն հայոց կաթողիկոս

Վազգեն Առաջինի հետ գործնական հանդիպման ժամանակ ականատես եղավ, թե ինչպես բոլորի ներկայությամբ ընդհանուր ծանոթներից մեկը նույն այդ ժամանակում վեհափառի աջը համբուրելու փոխարեն որոշեց ամուր սեղմել նրա ծեռքը՝ արժանանալով մայրաքոռի դիվանապետի նկատողությանը՝ «Պարո՞ն, վեհափառի ծեռքը չե՞ն թոթվեր»:

Չեռքսեղման սովորույթը եկել է հին ժամանակներից, և մարդիկ հանդիպելով միմյանց, մեկնել են իրենց ծեռքը՝ ի նշան իրենք գինված չլինելուն:

Չմոանը տղամարդիկ ծեռքսեղման ժամանակ պարտավոր են հանել իրենց ծեռնոցները, իսկ կանայք՝ ոչ։ Չեռքսեղման ժամանակ ծախսությունը պետք է մի փոքր ետ տանել, իսկ ծախս ծեռքը տանել մի քիչ առաջ, որպեսզի ավելի հարմար լինի ծեռքսեղման համար՝ չմոռանալով ծեռքը իջեցնել մի քիչ ներքև։ Նա, ով առաջինն է բարեւում, ինքն էլ առաջինն է սեղմում դիմացինի ծեռքը։ Արդարացված է ծեռքով չբարեւելը, երբ դիմացինի ծեռքը վիրակապի մեջ է։

Մահմեդական որոշ Երկրներում, ինչպիսի ընդունելություններ էլ որ լինեն, տղամարդիկ մահմեդական կանանց ծեռքով չեն բարեւում: Դա նրանց մոտ ընդունված չէ:

Գոյություն ունեն ծեռքսեղման մի քանի ծևեր, որոնց միջոցով կարելի է ընդիանուր պատկերացում կազմել դիմացինի նկարագրի մասին:

- Չեռքսեղմում Երկու ծեռքով. այս կարգի ծեռքսեղմումը տեղի է ունենում սովորաբար քաղաքական գործիչների և հաճախ նաև բարեկամ Երկրներ ներկայացնող ռիվանագիտական ներկայացուցչությունների դեկավարների միջև՝ խորհրդանշելով փոխվաստահություն, բարեկամական զգացումներ, անկեղծություն և ջերմ հարաբերություններ: Երկու ծեռքով ծեռքսեղման ժամանակ ծախսի ծախսի ծախսը դնում են զրուցակցի աջ ծեռքի վրա և որքան ծախս ծեռքը գտնվում է ավելի բարձր, այնքան ավելի ուժեղ են արտահայտվում զգա-

ցումները: Երկու ձեռքով ձեռքսեղման ժեստը ընդունելի չէ ծանոթության ժամանակ, քանի որ այն անծանոթ մարդու մոտ կարող է առաջացնել անցանկալի անվատահություն:

- Անտարբեր ձեռքսեղմում - այն իրենից ներկայացնում է ձեռքի թույլ սեղմում և նշանակում է տվյալ անձի թույլ կամքի տեր լինելը:
- Ուժեղ ձեռքսեղմում - այն, բնականաբար, կարող է ցավ առաջացնել, բայց չպետք է մոռանալ, որ նման ժեստը նախընտրում են լուրջ մարդիկ, որոնց նկարագրի հիմնական գիծը իշխանության ծգտումն է:
- Սահմանափակ ձեռքսեղմում - Այս տեսակի ձեռքսեղմանը հետևող մարդիկ առաջ են տանում միայն ձեռքի մատները՝ հասկացնելով, որ իրենք որոշակի տարածություն են պահպանում՝ և ծգտելով օտար ճնշումից իրենց հեռու պահել: Այս կարգի մարդկանց բնորոշ

է ինքնավստահության զգացողության
բացակայությունը:

Տարբեր ժողովուրդների և ազգերի մոտ կան ձեռքսեղման զանազան ձևեր: Տողերիս հեղինակը Լիրիայում աշխատելու տարիներին չեր զարմանում, երբ տեղացիները /նաև բարձրաստիճան պաշտոնյաները/ ձեռքսեղմումից հետո իրենց աջ ձեռքը տանում էին սրտի կողմը կամ այն համբուրում:

Կովկասի ժողովուրդների, օրինակ աբխազների մոտ ձեռքսեղմումով հիմնականում ողջունում են մոտ ծանոթներին և հարազատներին, իսկ եթե այդ պահին ներկա է լինում ինչ-որ անծանոթ մարդ, ապա նրա ձեռքը ևս սեղմում են: Ադրբեջանցիների մոտ ձեռքսեղմումը հիմնականում տարածված է տղամարդկանց շրջանում, իսկ ճապոնացիների մոտ այն ընդունված չէ:

Աշխարհի շատ ու շատ ժողովուրդներ բարեկելու զանազան ու անսովոր ձևեր ունեն: Այսպես, չինացին, հանդիպելով ընկերոջը՝ նրան բարեկելիս սեղմում է իր երկու ձեռքերը: Ամերի-

կացիները միմյանց ողջունելիս թերև թխկացնում են իրար ուսի: Լատինաամերիկյան ժողովուրդներին հատուկ է ողջունելիս միմյանց գրկախառնվելը: Ֆրանսիացիները համբուրում են այտերը, իսկ լեհերը՝ կնոջ ծեռքը: Կան ժողովուրդներ, որոնք ողջունում են ազգային ավանդական ձևերով: Օրինակ՝ թիբեոցին ծանոթին ողջունելիս նախ հանում է գլխարկը աջ ծեռքով, այնուհետև ձախ ծեռքը տանում ականջը և դուրս հանում լեզուն: Քենիայի բնակիչների մոտ որպես ողջունի և խորին հարգանքի նշան ընդունված է թքել հանդիպած մարդու վրա:

Բարենել կարող են այն մարդիկ ովքեր ունեն բնության տված ամենաթանկարժեք պարզեց՝ բնական և իրական ժպիտը: Այն, սովորաբար աստիճանաբար է առաջանում դեմքին՝ փոխելով դիմագիծը, և չի մնում երկար, այլ անհետանում է խորիոդավոր դանդաղությամբ: Նման ժպիտ ունեն այն մարդիկ, ովքեր բարի են իրենց նկարագրով: Ժպիտը մարդկային զգացմունքների բնական դրսեորումն է, բարեկամեցողության գլխավոր արտահայտություններից մեկը:

ՍԳՈ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐՎՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ինչպես նշել ենք նախորդ բաժիններում, դիվանագետն իր ծառայության ամբողջ ժամանակահատվածում պարտավոր է հետևել էթիկայի տարրական կանոններին, քանի որ դրանցով են դրսնորվում նրա վարչագիծն ու քաղաքական մակարդակը ոչ միայն պաշտոնական և ոչ պաշտոնական ընդունելությունների, տարբեր առիթներով կազմակերպվող հանդիսությունների կամ խրախճանքների, այլև սգո արարողությունների ժամանակ, երբ անհրաժեշտ է, որ ընդգծվի դիվանագետի հարգանքը սգակիր երկրի և նրա ներկայացուցիչների նկատմամբ:

Այս կամ այն երկրի դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարին ցավակ-

ցություններ հայտնելու անհրաժեշտությունից ելնելով, երբ պաշտոնական սուգ է հայտարարվել հավատարմագրող Երկրում /նախագահի, վարչապետի կամ քաղաքական ու պետական հայտնի գործչի մահվան դեպքում/, դիվանագետները պետք է ներկայանան տվյալ դեսպանատուն և առաջինը ցավակցեն դեսպանին, ինչպես նաև անձնակազմի դիվանագիտական աստիճանով ավագ աշխատակիցներին: Կանգնելով սրահում տեղադրված հանգուցյալի լուսանկարի առջև՝ պետք է հարգանքի տուրք մատուցել նրան գլխի թերև խոնարհումով: Ցավակցություններ հայտնող պաշտոնատար անձը կարող է օգտագործել հետևյալ ընդունված արտահայտությունը. «Թույլ տվեք հայտնել Զեզ իմ խորին ցավակցությունները», «Ես կիսում եմ Զեր Վիշտը»: Դիվանագիտական ներկայացուցությունների դեկավարները պարտավոր են տվյալ Երկրի դեսպանատանք բացված սգո մատյանում կատարել գրառուներ: Եթիկայի կանոնների համաձայն, ցավակցական խոսք գրելիս պետք է հաշվի առնել իրենց Երկրների միջև առկա հարաբերություն-

ների մակարդակը: Գրառումները պետք է լինեն գուսակ և կարծ, իսկ ցավակցական խոսքը շարադրելիս պետք է կենտրոնանալ տվյալ էջի վրա, չփորձել թերթել մատյանը և հայացք չգցել ուրիշների գրառումների վրա, քանի որ այդ պահին բոլոր ներկաների ուշադրությունը սկզբան է լինում գրառում կատարողի վրա: Գրառումն ավարտելուց հետո գրողը թողնում է իր այցեքարտը, որի վրա լատինատառ նշված է լինում P.C /Pour condoleances/ հապավումը՝ ցավակցություն հայտնել:

Եթիկայի պահանջներից ելնելով՝ սգո պաշտոնական արարողությունների ժամանակ դիվանագետները պարտավոր են ներկայանալ բացառապես մուգ կոստյումներով, սպիտակ վերնաշապիկով և սև փողկապով, իսկ կանայք՝ մուգ շրջազգեստով, որի երկարությունը պետք է լինի ծնկից ներքև, իսկ շպարզ չափավոր՝ ծեռնպահ մնալով շացուցիչ, քանկարժեք կամ արհեստական զարդեր կրելուց:

Սգո հանդիսավոր արարողությունների մասնակիցները պարտավոր են պահպանել կատարյալ լուրջուն: Երբեք ընդունված չէ

Նման միջոցառումների ժամանակ բարձրածայնել ներկաների մոտ, խոսել այլ թեմաներով կամ հիշել ուրախ պատմություններ և քննարկել ինչ-որ գործնական հարցեր: Պետք է հիշել, որ բոլոր մասնակիցների ուշադրությունը ինքնաբերաբար կենտրոնանում է այն ամենի վրա, ինչը խորթ է եթիկայի կանոններին, և ի վերջո այն կարող է բամբասանքի տեղիք տալ:

Նստավայր երկրում պաշտոնական սուճ հայտարարելու դեպքում արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգը հայտագրի միջոցով տեղյակ է պահում այդ մասին բոլոր դեսպանություններին: Դայտագրի մեջ նշվում է արարողությունների անցկացման օրը, ժամը և վայրը: Ի դեպ, դիվանագիտական անձնակազմը գործում է ինչպես արարողակարգի ծառայության դեկավարի, այնպես էլ դուայենի հետ համաձայնեցված գործողություններով: Ի նշան հարգանքի՝ դիվանագիտական ներկայացուցչությունները կիսով չափ իջեցնում են իրենց ազգային դրոշները և գերծ մնում տարբեր միջոցառումներ կազմակերպե-

լուց: Դիվանագիտական ներկայացուցչության
դեկավարները պետք է պաշտոնական ցավակ-
ցական հայտագրեր ուղարկեն նստավայր Երկ-
րի դեկավարին:

«Հագուալրը և զգեսդավորում,
և մերկացնում է մարդուն»:
Մերկանդիս

ՀԱԳՍՎԵԼ՝ ԵԹԻԿԱՑԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՑՅՆ

Ֆրանսիական թեսավոր խոսքն ասում է. «Թագավորը պետք է երևա որպես թագավոր»: Սա պատահական արտահայություն չէ. նշանակում է, որ պաշտոնատար անձի արտաքին տեսքը պետք է համապատասխանի թե՛ ժամանակի և թե՛ տեղի իրադարձության բնույթին:

Դարեր առաջ մարդիկ կրել են զգեստներ իրենց սոցիալական կարգավիճակի համաձայն: Օրինակ, ժամանակին միայն կայսերական տոհմին պատկանող իշխանութին է գլխարկ կրելու իրավունք ունեցել, նման իրավունք չի ունեցել մարկիզի կինը: Ոուս բարե-

փոխիչ կայսր Պետրոս Առաջինի օրոք միայն հինգ դասերի պատկանողների է թույլատրվել կրելու մետաքսյա կամ ասեղնագործ հագուստներ: Այսօր պաշտոնական դիրք զբաղեցնող անձիք ևս հետևում են հագուկապի էթիկայի կանոններին: Դաճախ ասում են, որ խրախուսելի չեն, եթե ենթական իր վերադասից ավելի թանկ զգեստ է կրում, մասնավորապես, երբ դեկավարը կին է: Տեսակետ կա, որ ներկայացուցչական պատվիրակության անդամի հագուկապը իր արժեքով չպետք է ավելի լինի պատվիրակության դեկավարի կրած զգեստից: Մրանք, որքան էլ որ չգրված կանոններ են, այնուամենայնիվ իմաստազուրկ չեն, եթե ծառայողական հարաբերությունները կառուցվում են ավագության սկզբունքի վրա: Դիվանագետի համար կոնկրետ առիթի կապակցությամբ հագնվելը հարգանքի նշան է ինչպես իր մասնագիտության, այնպես էլ սոցիալական կարգավիճակի և հեղինակության հանդեպ:

Ըստ անգլիացիների՝ եթե ընդունելության եկել եւ հագնված ոչ այնպես, ինչպես բոլորը,

և շրջապատում երևում ես, ինչպես «սպիտակ ագռավ», ապա ճիշտ է աննկատ ու անհապաղ հեռանալը: Պաշտոնական ընդունելության մասին հրավեր ստանալիս անհրաժեշտ է ուշադիր նայել հրավիրատոմսի ներքեւում զգեստի տեսակի մասին արված նշումներին /ամենօրյա կոստյում, սմոկինգ կամ ֆրակ/:

Արտասահմանում խորհրդային դեսպանություններից մեկում աշխատող երիտասարդ դիվանագետը, փոխանցելով դեսպանին նրա անունով ստացված հրավերը, որտեղ նշված էր զգեստի տեսակը՝ «Black tie» /սմոկինգ/, բառացի հասկանալով իմաստը, դեսպանին ուղարկում է կարեւոր ընդունելության սև փողկապով: Ընդունելության ներկա դիվանագետները, նկատելով խորհրդային դեսպանի սև փողկապ, սկսում են իրար մեջ փսփսալ՝ տալով հռետորական հարց. «Խորհրդային դեսպանը եկել է մեզանից որի՞ն թաղելու»:

Յուրաքանչյուր երկրում գոյություն ունենալի վերաբերյալ որոշակի ընդունված նորմեր: Եթե դրանք չեն վնասում ներկայաց-

վող Երկրի կամ դիվանագետի անձնական հեռինակությանը, ապա կարելի է դրանց հետևել՝ հարգելով նաև ընդունող Երկրի սովորությունները։ Նրանք, ովքեր դիվանագիտական ժառայության մեջ են եղել Մերձավոր արևելքի առավել տաք Երկրներում, նրանք գիտեն, թե որքան դժվար է եղել փողկապ կապելը, սակայն քաջ գիտակցել են, որ դա է պահանջում մասնագիտությունը, ներքին կազմակերպվածությունն ու կարգապահությունը։

Պաշտոնական ընդունելությունների ժամանակ դիվանագետը, կատարելով իր ծառայողական պարտականությունները, պարտավոր է ճիշտ ընտրել իր հագուստը, քանի որ նրա կրած կոստյումը, վերնաշապիկը, փողկապը, գուլպաները, գլխարկը և կոշիկները արտացոլում են նրա նկարագիրը՝ որոշակի տպավորություն թողնելով ընդունելության մասնակիցների վրա։

Ականատեսների վկայությամբ խորհրդամերիկյան գագաթաժողովներից մեկի ժամանակ /Ույլյավիկ/ հեռուստալրատվամիջոցների հետաքրքրությանը չափ ու սահման չկար,

Երբ նրանք հեռուսատախցիկները կենտրոնացրել էին Խորհրդային Սիության արտաքին գործերի նախարար է. Շևարդնաձեի ոտքերին, երբ վերջինս փորձում էր թաքցնել՝ ցույց չտալու իր կարմրամոխրագույն գուլպաները:

Դայտնի է, որ դեռևս Խորհրդային պետության առաջին տարիներին Խորհրդային դիվանագետի պաշտոնական հագուստը շատ էր տարբերվում այսպես կոչված «բուրժուական հասարակության խորհրդանիշը համարվող սմոկինգից. Ֆուակից ու գլխարկից, որոնք խորթ էին Խորհրդային բանվորա-գյուղացիական պետության ոգուն»: Նման կարծր մտածելակերպը ի վերջո տանում էր դեպի փակուղի, որովհետև միջազգայնորեն ընդունված եթիկայի նորմերը պահանջում էին դիվանագիտական միջավայրի որոշակի ավանդույթների ու պայմանավորվածությունների պահպանում: Դետագայում, անշուշտ ամեն ինչ կարգավորվեց:

Պաշտոնական ընդունելությունների ժամանակ, որոնք սովորաբար սկսվում են ոչ ուշ քան ժամը ութը, դիվանագետը կոստյում ընտ-

րելիս նախապատվությունը պետք է տա մի-
միայն մուգ գույնին: Ազգային տոնների, նստա-
վայր երկրի ղեկավարի, վարչապետի կամ ար-
տաքին գործերի նախարարի պատվին կազ-
մակերպվող ընդունելությունների ժամանակ,
որոնք սկսվում են երեկոյան ժամը ութից հե-
տո, խորհուրդ է տրվում հագնել մուգ՝ մասնա-
վորապես սև գույնի կոստյում, սպիտակ վեր-
նաշապիկ և կոստյումին հարմար գույնի փող-
կապ: Ի դեպ, պետք է հիշել, որ սև փողկապ
կարելի է կապել միմիայն սգո արարողություն-
ների ժամանակ: Եթե կոստյումը պետք է հա-
մապատասխանի մարդու կառուցվածքին, ա-
պա փողկապը՝ կապողի դեմքին ու հասակին:
Այսպես, լայն փողկապը վայել է երկարահա-
սակներին, իսկ կարճահասակները պետք է
կապեն միայն նեղ փողկապներ: Փողկապի եր-
կարությունը լինելու է տաքատի գոտուն հա-
վասար: Ընդհանրապես, փողկապի ծիշտ ընտ-
րությանը մեծ տեղ են հատկացնում, քանի որ
այն ոչ միայն պետք է համապատասխանի
կոստյումին, այլ նաև վերնաշապիկի գույնին:

Անգլիացիների մոտ ընդունված է,որ ջենտլմենը կարող է ունենալ մեկ կոստյում, բայց դուք կողքին բազմաթիվ փողկապներ: Ամերիկացիները ավելի մեծ ուշադրություն են դարձնուած փողկապն, քան հագուստին, և նրանց դիվանագետի հանդերձապահարանը լեցուն է փողկապներով: Ըստ նրանց՝ ամենահիդալականը գծավոր փողկապն է, այնուհետև կետավորը կամ փոքրիկ երկրաչափական ֆիգուրներովը:

Դագուստի ոճաբանները /dressmaker/ նշում են, որ հարկ է հագնվել այնպես, որ հագուստի ոչ մի տարր աչքի չընկնի: Եթե գովում են ծեր փողկապը, ապա նշանակում է, որ այն ավելի գեղեցիկ է, քան պետք է: Մեր կարծիքով ուշադրություն չեն դարձնի այն անձի վրա, ով բարձրացնաշակ է հագնված և անշուշտ, հակառակը:

Ինչպես անդրադարձել ենք վերևում, պաշտոնական ընդունելություններ կազմակերպելիս իրավիրատոմսերի վրա միշտ արվում են համապատասխան նշումներ միջոցառմանը ներկայանալու գգեստի տեսակի

մասին, օրինակ ««Black tie» կամ «White tie»: Առաջինը, ինչպես հայտնի է, նշանակում է, որ ներկայությունը լինելու է սմոկինգ կոստյումով, իսկ երկրորդը՝ ֆրակով: Արտասահմանյան ներկայացուցչություններում աշխատող առաջելությունների դեկավարները պետք է ունենան նշված երկու տեսակի կոստյումները:

Եթիկայի կանոնների համաձայն, պաշտոնական ընդունելություններին մասնակցելիս դիվանագետի կոստյումի կոճակները պետք է լինեն կոճկված: Դրանք կարելի է արձակել ընդունելությունների ժամանակ միայն սեղանի շուրջ կամ բազկաթոռին նստելիս:

Դիվանագետների համար նախընտրելի են ավանդական ոճի սև կաշվե կոշիկներ, որոնք համապատասխանում են թե՛ տղամարդկանց կոստյումին, և թե՛ կանանց շրջագգեստի բոլոր գույններին: Լաքապատ կոշիկ կարելի է հագնել միայն սմոկինգի հետ:

Պաշտոնական ընդունելությունների ժամանակ դիվանագետները պետք է ծեռնպահ մնան աչքի գարնող թանկարժեք զարդեր կամ

քամելեոն ապակիներով ակնոցներ կրելուց, քանի որ վերջինս չի կարող նպաստել փոխադարձ վստահություն ներշնչելուն:

Կին դիվանագետի հանդերձանքի սկզբունքը հետևյալն է. «Ծիշտ հագնված կինը նա է, ով ունի իր սեփական ոճը և հաշվի է առնում ինչպես տեղը, այնպես էլ ժամանակը»: Կանանց խորհուրդ է տրվում հիշել, որ ճաշակով, իրենց կառուցվածքին ու տարիքին համապատասխանող շրջազգեստը կամ կոստյումը, ոչ մեծ պայուսակը, համեստ զարդեղենը և կոշիկները միշտ էլ լավ են նայվում: Ամենակարևորը կոշիկի և պայուսակի գույնի համապատասխանությունն է: Ընդունված չէ, որ պաշտոնական ընդունելություններին կանայք կրեն լայն բացվածքով կամ կարծ շրջազգեստներ: Կարելի է հագնել ինչպես կոստյում, այնպես էլ տաքատկոստյում: Երեկոյան ընդունելությունների ժամանակ ցանկալի է տոնական շրջազգեստներ կրել, իսկ կոշիկները պետք է լինեն բարձրակրունկ: Դաճախ պատահում է, երբ պաշտոնատար կանայք նախընտրում են միատոն մուգ

կապույտ գույնը՝ ընդգծելու համար իրենց ծառայողական դիրքը: Կանայք պետք է լինեն չափի սահմաններում. չպետք է կրել շլացուցիչ թանկարժեք զարդեր: Խորհուրդ չի տրվում զարդեր կրելը մինչև երեկոյան ընդունելությունները կազմակերպող միջոցառումների ժամանակ: Զարդը պետք է լինի նրբաճաշակ ու ներդաշնակ շրջազգեստին: Երբեք ուսկյա և արծաթյա զարդեր միաժամանակ չեն կրում: Ցուցանոլությունը կարող է վնասել դիվանագետի իմիջին:

«Դաստիարակությունը խղճի հարց է. իսկ կրթությունը՝ զիգության։ Ավելի ուշ դարձների հետ արդեն ջևավորված մարդու մուտք իմացության այս երկու ժերը լրացնում են միմյանց»։

Վ. Հյուգո

ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼՈՒ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԷԹԻԿԱԸ

Սովորաբար դիվանագետներին բնորոշ է տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ շփվելը և հաղորդակցվելը։ Նստավայր երկրում իրենց ծառայողական պարտականությունների կատարման և անծնական շփումների ընթացքում նրանք ունենում են ինչպես գործընկերներ, այնպես էլ մտերիմներ, որոնց հետ աշխատում են պահպանել ջերմ ու

բարեկամական հարաբերություններ: Դիվա-
նագետները նստավայր երկրում հակված են
ընդլայնել իրենց ծանոթությունների շրջանա-
կը, ծեռք բերել նոր մտերիմներ և հաստատել
հարաբերություններ հետաքրքիր ու հայտնի
մարդկանց հետ:

Գործընկերոջը կամ մտերիմ մարդուն
հյուրընկալելու ցանկության դեպքում պետք է
նախապես տեղյակ պահել նրան և ճշտել հար-
մար ժամանակը: Դնարավոր է, որ հյուրընկա-
լողի համար Զեր կողմից նրան առաջարկված
օրը հարմար չէ, և դրանից չպետք է նեղանալ,
այլ կարելի է փոխել օրը՝ հարմարեցնելով
հյուրընկալողին: Գործընկերոջ կողմից հրա-
վերն ընդունելու աննպատակահարմարության
դեպքում անհրաժեշտ է նրբանկատորեն հայտ-
նել նրան Զեր զբաղվածության կամ անհե-
տաձգելի պայմանավորվածության մասին՝
չմոռանալով նշել մոտ ժամանակում հրավերն
ընդունելու պատրաստակամությունը: Ընդուն-
ված է, և հյուր գնալը, և հյուր ընդունելը: Ներե-
լի է, երբ տեխնիկական հանգամանքների բե-

րումով պատասխան այց չի կատարվում, սակայն անընդունելի են անհարգելի պատճառները, քանի որ այդ երևույթը հասկացնել է տալիս, որ Զեր մտերմությունը դրական արդյունք չի տվել:

Դիվանագետների միջև քերմ մտերմության առկայության դեպքում հրավիրել կարելի է առանց հրավիրատոմսի՝ հեռախոսազանգի միջոցով։ Եթե նախապես չունեք գործընկերոջը այցելելու պայմանավորվածություն և նրան առանց տեղյակ պահելու մտադրվում եք գնալ նրա տուն, ապա ժամանելիս, եթիկայի պահանջներից ելնելով, ընդունված է դուն զանգը հնչեցնել մեկ կամ երկու անգամ, բայց ոչ երկար։ Տանտիրոջ բացակայության դեպքում կարելի է բողնել երկտող կամ Զեր այցեքարտը։

Գործընկերոջը կամ ծանոթին այցելել կարելի է կեսօրից մինչև երեկոյան ժամը ութը։ Ընդունված չէ հյուր գնալ վաղ առավոտյան կամ ուշ երեկոյան։ Իսկ անկոչ հյուրի կարգավիճակում հայտնվողը կարող է վատ տպավորություն բողնել տանտիրոջ վրա, նույնիսկ հա-

րաբերությունների խզման պատճառ դառնալ: Պետք է հիշել, որ նախատոնական օրերին հարմար չէ հյուր գնալ՝ չզրկելով տանտիրոջը իր ազատ ժամանակը տնօրինելու իրավունքից:

Հյուր ընդունելիս ժամացույցին նայելը եթիկայի դեմ է: Թե՛ տանտերը և թե՛ հյուրը պետք է ունենան ժամանակի զգացում: Այցելությունը չպետք է համընկնի ճաշի կամ ընթրիքի ժամին: Սակայն եթե հանգամանքների բերումով հայտնվել եք ճաշի ժամին, և անհարմարություն է ստեղծվել, բայց և այնպես իրավիրվում եք տանտիրոջ հետ միասին ճաշելու, ապա քաղաքավարությունը պահանջում է մերժել այն, եթե իրավիրում են մեկ անգամ: Սակայն, երբ տանտերը ստիպում է իրեն ընկերակցել, միասին սեղանի շուրջ նստել, ապա համառելը տեղին չէ, և պետք է ընդունել նրա առաջարկը: Կտրականապես հարաժարվելը հասկացնել է տալիս, որ Դուք չեք ցանկանում միասին ճաշել: Ինչպես նշեցինք վերևում, շատ կարևոր է հյուրընկալվելիս չմոռանալ ժամա-

նակի զգացման մասին և չարաշահել տանտիրոջ համբերությունն այնքան, որ վերջինս սկսի հաճախ նայել ժամացույցին: Երբ հյուրընկալվողը ցանկանում է հրաժեշտ տալ տանտիրոջը, ապա նա կարող է նրան հիշեցնել, որ ինքն ունի անհետաձգելի գործեր կամ պայմանավորվածություն, և արդեն գնալու ժամանակն է: Իր հերթին, երբ տանտերը խնդրում է հյուրին մի փոքր էլ մնալ, ապա նպատակահարմար է հրաժարվել: Սակայն, երբ նման խնդրանքը կրկնվում է մի քանի անգամ, ապա եթիկան պահանջում է տեղի տալ տանտիրոջ խնդրանքին՝ հավատարիմ մնալով քաղաքավարության պահանջներին:

Տանտիրոջը անհարմարություն չստեղծելու համար հյուր գնալիս երեխաներին կարելի է քողնել տանը, բացառությամբ, երբ տանտերը նույնպես ունի երեխաներ կամ ծեզ հրավիրում են ընտանյոք հանդերձ:

Արծակուրդ մեկնելիս դիվանագետը տեղյակ է պահում իր մտերիմներին, իսկ վերջիններս էլ կարող են գալ նրան հրաժեշտ տալու,

իսկ արծակուրդից վերադառնալուց հետո դի-
վանագետը, ի նշան քաղաքավարության,
պետք է այցելի նրանց՝ իր հետ տանելով
խորհրդանշող հուշանվերներ:

Երբ դիվանագետը հիվանդանում է, և այդ
մասին տեղյակ են լինում նրա մտերիմները, ե-
թիկայի նորմերը հարգելով՝ վերջիններս պետք
է այցելեն նրան, քանի որ դրանով հոգեպես
նպաստում են նրա կազմուրվելուն: Այս առն-
չությամբ չեմ կարող չիիշել հետևյալ անմոռաց
իրադարձությունը: Տողերիս հեղինակը, երբ
1994 թ. Հայաստանում Զինաստանի ժողովր-
դական Հանրապետության դեսպան Չժառ Սի-
դիի ընկերակցությամբ այցելեց Ամենայն հա-
յոց կաթողիկոս Վազգեն Առաջինին, որը
երևանյան իր նստավայրում ծանր հիվանդ
գամված էր մահճին. վերջինս այդ անակնկալ
այցելությունից գերբնական ուժ ստացավ և
անմիջապես ուղղվեց՝ իր բարի ժայռով ող-
ջունելով հյուրերին:

Եթիկայի նորմերի համաձայն՝ դիվանագի-
տական անձնակազմի անդամները կարող են

այցելել իրենց հիվանդ գործընկերոջը՝ տանելով իրենց հետ ոչ սուր հոտ ունեցող ժաղիկներ: Նման այցը սովորաբար կարճ է լինում, քանի որ հիվանդի մոտ ընդունված չէ երկար մնալ: Դիվանագետը հիվանդ գործընկերոջը տեսակցելիս՝ պետք է ուղղի նրան հիվանդությունը հաղթահարելու քաջալերանքի և շուտափույթ ապաքինվելու խոսքեր՝ խույս տալով ընդհանրապես այնպիսի թեմաներից, որոնք կարող են ալեկոծել հիվանդի հոգեվիճակը: Երբ հիվանդը ինքն է մանրամասնում իր հիվանդությունը, ապա ներկաներին մնում է միմիայն զինվել համբերությամբ՝ լսելով նրան մինչև խոսքի ավարտը: Դիվանդը առողջանալուց հետո պետք է պատասխան այց տա բոլոր նրանց, ովքեր այցելել են իրեն:

Մենք նշել ենք, որ դիվանագետի կողմից ճշտապահությունը հարգելը պարտադիր է, սակայն կարող են լինել չնախատեսված հանգամանքներ, երբ անկախ իրենից դիվանագետը ուշանում է այս կամ այն միջոցառումից: Պաշտոնական այցերի ժամանակ ուշանալ ըն-

դունված է մոտ տաս րոպե, ընտանեկան հավաքույթների ժամանակ ոչ ավել քան երեսուն րոպե: Եթիկայի նորմերի համաձայն՝ հյուզն-կալվելու ժամանակը չպետք է գերազանցի երեկոյան ժամը տասը-տասնմեկը, բացառությամբ ամանորի կամ հարսանյաց հանդեսների: Եթե խնջույքի մասնակիցներից որևէ մեկը հարգելի պատճառով մտադիր է նախքան միջոցառման ավարտը գնալ, ապա նա պետք է աննկատ մոտենա հյուրընկալողին և հաղորդի նրան այդ մասին: Սա անգլիական մոտեցման ծև է: Եթե հանգամանքների բերումով նրան այդ բանը չի հաջողվում, ապա կարելի է բոլորին մաղթել լավ ժամանց և հրաժեշտ տալ: Հրաժեշտից առաջ հյուրերը շնորհակալություն են հայտնում միմյանց հաճելի երեկոյի համար, իսկ տանտիրոջն առաջարկվում է հարմար ժամանակ պատասխան այց տալ:

Տանտերը հյուրին հրաժեշտ տալու պահին սովորաբար անձամբ չի բացում դուռը, քանի որ պահի տակ կարող է ստեղծվել այն տպավորությունը, որ րոպե առաջ ինքն ուզում

է ազատվել հյուրից: Այդ պարտականությունը կարող է կատարել տան սպասավորը: Սովորաբար, երբ հյուրերը հերթով մեկնում են, ապա նրանց ճանապարհում է տանտերը, իսկ տանտիրուիին մնում է մյուս հյուրերի մոտ: Եթե հյուրը միայնակ կին է, ապա տանտերը նախապես պետք է հոգա նրա ճանապարհելու մասին՝ թողնելով այդ պարտականությունը մոտակա շրջանում բնակվող տղամարդ հյուրերից մեկի կամ ընտանիքի վրա:

Ըստ էթիկայի նորմերի՝ նստավայր երկրում դիվանագետները պետք է հյուր գնան և հյուր ընդունեն: Պետությունների միջև ջերմ հարաբերությունների առկայությունը նպաստում է արտասահմանում իրենց երկրների դիվանագիտական ներկայացուցիչների միմյանց միջև ինչպես գործնական, այնպես էլ անձնական մոտ հարաբերությունների հաստատմանը:

Դյուր գնալիս կամ ընդունելիս անհրաժեշտ է հետևել էթիկայի կանոններին: Նախ հյուրին դիմավորում է տանտերը և նախասրահում նրան առաջարկում է հանել վերարկուն և

առաջնորդում այնտեղ, որտեղ հավաքված են լինում բոլոր հյուրերը: Մոտենալով տանտիրուհուն՝ հյուրը ողջունում է նրան, իսկ տանտիրուհին այդ պահին պարտավոր է ընդհատել ներկաների հետ ունեցած զրույցը՝ ներդություն խնդրելով և մեկ քայլ առաջ գնալով դեպի հյուրասենյակ մտնող հյուրը: Եթե հյուրը որոշված ժամից ավելի շուտ է ժամանել, ապա նա, լինելով առաջինը, բնականաբար նախարահում պետք է սպասի մյուս հյուրերին, տանտերը այնտեղ նրան մենակ չպետք է թողնի, իսկ եթե հանգամանքները ստիպում են մենակ մնալ, ապա կարելի է միացնել հեռուստացույցը կամ էլ կարդալ սեղանին դրված ամսագրերը:

Եթիկայի նորմերի համաձայն խորհուրդ է տրվում.

- Նոր հյուրի՝ հյուրասրահ մտնելիս նստած տղամարդիկ կանգնում են՝ ի նշան հարգանքի և ապա նստում:
- Տարեց կնոջ՝ սրահ մտնելիս բոլոր ներկաները, այդ թվում կանայք, ուտքի են

կանգնում, իսկ հասակակից կանայք կարող են միմյանց ողջունել նստած:

- Դիվանագիտական աստիճանով բարձր կամ տարիքով Ձեզանից մեծ անձին չեն բարեւում ծեռքով, մինչև որ նա իր ծեռքը չմեկնի Ձեզ:
- Չշտապել նստել, սպասել մինչև Ձեզ կիրավիրեն, պետք է նստել, երբ տանտերն ու տանտիրուհին կզբաղեցնեն իրենց տեղերը:
- Չվիճել և երբեք չխոսել անհեթեք բաների մասին:
- Տանտերը պարտավոր է բոլոր հյուրերի հանդեպ ունենալ նույն ուշադրությունը և երկար երկխոսություն չժապալել որևէ հյուրի հետ:
- Եթե ընդունելության ժամանակ ներկաներից որևէ մեկին խնդրում են երգել կամ նվագել ինչ-որ երաժշտական գործիք՝ իմանալով, որ տվյալ անձը ունի

այդ շնորհքը, ապա էթիկային դեմ է հրաժարվելը:

- Որքան էլ գրուցակիցը տաղտկալի լինի կամ էլ խոսի անհետաքրքիր բաների մասին, այնուամենայնիվ, պետք է լինել քաղաքավարի ու համբերատար, որպեսզի մյուս ներկաները չնկատեն Զեր ջղածգությունը:
- Դյուրերի մոտ չխոսել այն գործերի մասին, որոնք միայն Զեզ և Զեր գրուցակցին են վերաբերում:
- Դիվանագետների շրջանակում ընդունված չէ ուրիշի ականջին փսխուալ, նույնիսկ, եթե պահը կարևոր է, ասելիքը պետք է հետաձգել:
- Չխոսել անձնական հիվանդությունների կամ անհաջողությունների մասին:
- Չփորձել ընկերոջ հետ գրույցը դարձնել Զեր մենաշնորհը:

- Զխոսել կամ կատակել այն մարդկանց մասին, որոնց ներկաները ժանոթ չեն:
- Զեր երկարատև ներկայությամբ պետք չէ չարաշահել տանտիրոջ հյուրասիրությունը, որքան էլ որ միջավայրը հաճելի լինի:
- Նյուրընկալվելիս ժամացույցին չնայել հաճախ և շուտ գնալու մտադրության դեպքում նախապես ներողություն խնդրել տանտիրոջը և ապա աննկատ հեռանալ:
- Նրաժեշտի ժամանակ տանտիրուիին իր ծեռքը առաջինն է մեկնում:
- Ընդունված է, որ տանտիրոջը առաջինը հրաժեշտ են տալիս տարեց հյուրերը, ապա միջին տարիք ունեցողները և միայն վերջում՝ երիտասարդները:

Մի քանի խոսք արտասովոր իրավիճակներում դիվանագիտական էթիկան պահպանելու մասին:

Իր առաքելության ընթացքում դիվանագետը կարող է հայտնվել ոչ հաճելի իրավիճակում /նույնիսկ անկախ իրենից/, դիվանագետին անընդունելի ու անհարիր արտահայտություններ թույլ տալ: Այսպես.

- Դիվանագետը ծանոթանում է գործընկերոջ հետ երկրորդ անգամ, և այդ մասին ծանոթացողը հիշեցնում է:
- Պատահում է, երբ միմյանց ծանոթ դիվանագետները հանդիպում են, և նրանցից մեկը հետաքրքրվում է մյուսի կնոջ կամ ամուսնու որպիսությամբ և անակնկալի եկած՝ ստանում է այսպիսի պատասխան. «Մենք ամուսնալուժված ենք» կամ «Նա վերջերս է մահցել»: Նման իրավիճակից դուրս գալու ամենահարմար միջոցը հետևյալ կերպ ներողություն խնդրելն է. «Կներեք ես ուղղակի տեղյակ չեմ եղել»:
- Ընդունված չէ անտեղի և հատկապես անհաջող անեկդոտ /քաղաքական

կամ կենցաղային/ պատմել գործընկերների շրջապատում:

- Անսպասելի հյուրը ճոխ հյուրասիրվելու ակնկալիք թող չունենա: Նրան պարզ հյուրասիրություն է սպասվում:
- Ցանկացած ընդունելության ժամանակ եթիկայի նորմերին դեմ է որևէ մեկին երկար հայացքով նայելը կամ կանանց վրա քննող և ուրիշի ուշադրությունը գրավող հայացքով կենտրոնանալը:
- Կանայք հանդիպելիս ընդգծված հայացքով չպետք է զննեն միմյանց զգեստները կամ ընդգծված նայեն դիմացինի արդուզարդին, քանի որ նման վարքագիծը կարող է գրավել մյուս ներկաների ուշադրությունը:

ԻՆՉՊԵՍ ԴՐՍԵՎՈՐԵԼ ԻՐԵՆ
ԹԱՏՐՈՆԸՈՒՄ ԿԱՍ
ՀԱՍԵՐԳՎԱՐԱՀՈՒ

Դիվանագիտական անձնակազմի անդամները դեսպանընկալ երկրում անբաժան են մշակութային կյանքից: Նրանց համար շատ հաճելի է մասնակցել քատերական ներկայացումներին, կառավարական մակարդակով կազմակերպվող հոբելյանական հանդիսություններին, կինոդիտումներին, փառատոններին կամ հանրաճանաչ խմբերի ու մենակատարների ելույթներին: Մշակութային նման միջոցառումներին մասնակցելիս դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները բենադրությունների ընդմիջումների ընթացքում կարող են կարճ հանդիպում ունենալու ներկայացումներին ներկա գտնվող պետական այս կամ այն այրի հետ, զրուցելու որևէ

կարևոր հարցի շուրջ կամ առաջիկայում պայմանավորվածություն ձեռք բերելու նրա հետ հանդիպելու բացառիկ հնարավորություն են ունենում: Մշակութային ներկայացուցչական հանդիսություններին մասնակցելիս դիվանագետը պետք է իմանա էթիկայի նորմերի պահպանման կարգը: Թատերական ներկայացումներին ներկա գտնվելիս անհրաժեշտ է, որ տղամարդիկ կրեն տոնական զգեստ՝ մուգ գույնի կոստյում, սպիտակ վերնաշապիկ և համապատասխան փողկապ, իսկ կանայք՝ երեկոյան շրջազգեստներ՝ ունենալով փոքրիկ մուգ գույնի պայուսակ և շրջազգեստին համապատասխան գեղեցիկ թաշկինակ: Երեկոյան հատուկ ներկայացումների ժամանակ տղամարդիկ ներկայանում են սմոկինզներով: Պետք է հիշել, որ ներկայացուցչական միջոցաթումներին ընդունված չէ ներկայանալ ամենօրյա աշխատանքային կամ կիսասպորտային զգեստով, քանի որ այն կրիտվի որպես անհարգալից վերաբերմունք ինչպես ներկա գտնվող հասարակության, այնպես էլ ելույթ

ունեցող դերասանների նկատմամբ։ Անհրաժեշտ է ձեռնպահ մնալ սուր իոտ ունեցող օժանելիքներից։ Դրանք պետք է համապատասխանեցնել տարվա եղանակին և օգտագործել չափավոր։

Թատերասրահ կամ համերգասրահ մտնելիս պետք է նախ մոտենալ հանդերձապահին, հանել վերարկուն ու գլխարկը և հանձնել աշխատողին։ Չնոանը կանայք կարող են իրենց հետ բերել երեկոյան կոշիկներ՝ դրանք հարդարանքի սենյակում փոխարինելով իրենց կրած ծմեռային երկարանիտ կոշիկներին։

Սովորաբար հեղինակավոր թատերական սրահներում՝ օթյակում, դիվանագետների և միայն հատուկ կարգավիճակ ունեցող հյուրերի համար նախատեսված են լինում առանձնացված տեղեր։ Օգտվելով առանձնացված տեղերից՝ դիվանագետը պարտավոր է հետևել եթիկայի կանոններին։ Դյուրերի տեղերը առանձնացնելիս հրավիրող կողմը նախապես պարտավոր է հաշվի առնել դիվանագիտական

ներկայացուցչությունները ներկայացնող երկր-ների միջև առկա հարաբերությունները և ըստ այդմ՝ կազմակերպել այդ ներկայացուցչությունների դեկավարների տեղավորումը օրյակում։ Ակամա հիշեցի այսպիսի դեպք. 1990-ականների սկզբին տողերիս հեղինակը ականատես է եղել, թե ինչպես Ազգային օպերայի թատրոնի օրյակում ներկայացման կազմակերպիչները, անտեսելով Վերոնշյալ հանգամանքը, օրյակում կողք կողքի նստեցրել էին Միացյալ Նահանգների և Իրանի դեսպաններին, որոնց երկրների միջև հարաբերությունները լարված բնույթ էին կրում։ Արդյունքում, դեսպաններից մեկը, կաշկանդված զգալով իրեն, աշխատում էր դուրս գալ նման իրավիճակից՝ ստիպված լինելով ներկայացման առաջին իսկ գործողությունը ավարտվելուց հետո հեռանալ դահլիճից։

Դիվանագիտական անձնակազմի դեկավարները մշակութային միջոցառումներին մասնակցելու ժամանակ պետք է ներկայանան իրենց ուղարկված իրավիրատոմսերով, որպես-

զի քատրոնի կամ համերգասրահի շենք մտնելիս հսկիչները ավելորդ հարցեր չուղղեն դեսպաններին, որոնց ի դեպ հնարավոր է դեմքով չճանաչեն: Եթե երկու դիվանագետներ պատրաստվում են քատրոնի շենք մուտք գործել միաժամանակ, ապա, եթիկայի կանոնների համաձայն, նախ մուտքով մտնում է դիվանագետներից մեկը, ապա՝ նրանց կանայք, և միայն նրանցից հետո մյուս դիվանագետը: Ինչպես նշվեց վերևում, շենք մտնելիս հյուրերը նախ մոտենում են հանդերձարանին, դիվանագետը օգնում է կնոջը հանելու վերարկում, ապա հանձնում հանդերձապահին, իսկ ներկայացման վերջում դիվանագետը նախ հագնում է իր վերարկուն, որից հետո օգնում կնոջը:

Մշակութային միջոցառումներ կազմակերպելիս դիվանագետների համար կարող է նախատեսված տեղերը լինեն ընդհանուր սրահում /պարտեր/: Եթե մուտքը ազատ է, կարգերի միջով մարդկանց առջևով անցնելու ժամանակ առաջինն անցնում է տղամարդը և, շրջվելով դեմքով դեպի հանդիսատեսը՝ ներողութ-

յուն խնդրում նստածներին անհարմարություն ստեղծելու համար: Նման դեպքերում քաղաքավարի մարդիկ ոտքի են կանգնում, որպեսզի լրացուցիչ դժվարություններ չստեղծեն և հեշտացնեն անցնողի քայլերը շարքով: Անհրաժեշտ է նաև սիրալիր վերաբերմունք ցույց տալ նրան և չմնալ նստած՝ սպասելով, թե երբ անցնողը թույլտվություն կիսնդրի անարգել անցնելու: Դասնելով նստատեղին՝ նախ նստում է կինը՝ հետո տղամարդը: Երբ երկու ծանոթ դիվանագետներ ժամանում են համերգասրահ իրենց կանանց հետ, ապա վերջիններս նստում են կողք կողքի, իսկ տղամարդիկ զբաղեցնում են աթոռների երկու ծայրերը: Պետք է նստել աթոռներին անաղմուկ, երբեք չզբաղեցնել երկու արմնկակալները միաժամանակ կամ հենվել դիմացինի թիկնակին և ոտքերը հենել առջևի աթոռին: Ընդունված չէ անձնական իրերը /պայուսակ, անձրևանոց կամ այլ պարագաներ/ դնել կողքի ազատ աթոռին, քանի որ այն զբաղեցնողը կարող է մի փոքր ավելի ուշ ներկայանալ:

Եթիկայի նորմերը թելադրում են ներկայացումը սկսվելուց հետո չպուցել կողքինի հետ կամ ուշացողին մեկնաբանել առաջին գործողության բովանդակությունը։ Ներկայացումը սկսվելուց առաջ անհրաժեշտ է անջատել բջջային հեռախոսը և չփորձել ինչ-որ բան իյուրասիրել միմյանց։ Ծխողներին պետք է հիշեցնել, որ միայն ծխել կարելի է այնտեղ, որտեղ կա ցուցանակ, ընդմիջումների ընթացքում։ Լավ սովորություն չէ ընդմիջումից ուշանալը, քանի որ այն ավելորդ ուշադրության պատճառ կարող է դառնալ։ Սրահում ժանոթներ տեսնելիս պետք է գուսապ բարեկել՝ առանց ուշադրություն գրավելու, իսկ միմյանց մոտենալ կարելի է միայն ընդմիջնան ժամանակ։

Օթյակում կամ ընդիանուր սրահում ընդունված չէ կանանց շպարզելը։ Անհարժեշտության դեպքում այն կարելի է անել հարդարանքի սենյակում։

Ներկայացումների կամ համերգների ժամանակ ընդունված է օգտագործել բատերական հեռադիտակներ։ Հեռադիտակը պետք է

ուղղել միայն դեպի բեմը՝ մոտիկից տեսնելու դերասաններին և հետևելու նրանց ելույթին:

Անքաղաքավարության նշան է, երբ հեռաղիտակը ուղղում են դեպի հանդիսատեսը կամ էլ կենտրոնացնում ինչ-որ մեկի վրա: Չպետք է նաև մոռանալ, որ աշխարհի շատ հեղինակավոր թատերասրահներում ներկայացումների կամ համերգների ժամանակ ընդունված չէ նկարահանել կամ լուսանկարել արտիստներին, առավել ևս լուսարձակով, քանի որ այն տվյալ պահին կարող է շեղել ելույթ ունեցողներին:

Կան երիկայի հատուկ կանոններ, որոնց պետք է հետևել ծափահարությունների ժամանակ: Սովորաբար ծափահարում են, երբ բարձրացվում է բեմի վարագույրը, երբ երևում է երգիչը կամ գլխավոր դերասանը: Երբ ներկայացման ավարտին, դերասանական խումբը ողջունում է հանդիսատեսին, ծափահարություններն ուղեկցվում են հոտնկայս՝ ի նշան շնորհակալության: Սիմֆոնիկ կատարումների ժամանակ, երբ դրանք առանձին մասներից են,

ընդունված չէ ծափահարություններով ընդիա-
տելը: Բացառություն կարող է լինել, այն պահը
երբ մեներգիչն ավարտում է իր պարտիան՝
արժանանալով հանդիսատեսի ծափահարութ-
յանը:

Ծաղիկներ կարելի է փոխանցել, ապա
փոխանցել դերասանին միայն ելույթի ավար-
տին: Ծաղկեփնջի կամ զամբյուղի մեջ անպայ-
ման դրվում է ուղարկողի այցեքարտը, փո-
խանցվում թատրոնի հսկիչին, որն էլ հանձնում
է հասցեատիրոջը:

Ներկայացումը կամ համերգը ավարտվե-
լուց հետո շենքից հեռանում են անաղմուկ,
հանգիստ և առանց շտապելու:

«Նվերը թանկ է ոչիք,
այլ նվիրագուի արժեքով»:
Օվիդիոս

ՆՎԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՍԱԿՈՒՄ

Ինչպես մեր ամենօրյա կյանքում, այնպես
էլ ովանագետների միջև հաստատված ըն-
տանեկան հարաբերությունների կամ անձնա-
կան մտերմության ժամանակ նվերներ փոխա-
նակելը միշտ էլ եղել է: Նվերը մարդկանց միջև
անկեղծ հարաբերություններն արտահայտող
խորհրդանիշ է: Այն պարզեւում է երջանկություն
և ուրախություն, և այդ հարցում պետք է ճիշտ
ընտրություն կատարել՝ ուշադրություն դարձ-
նելով բարձր ճաշակին, գեղեցիկ փաթեթավոր-
մանը. ինչպես նաև մատուցման էթիկային:
Պետք է միշտ հիշել, որ գլխավորը նվերի ար-

ժեքը չէ, այլ այն, որ ընդունողը կարողանա
ըստ արժանվույն գնահատել այն՝ իամապա-
տասխանեցնելով իր ճաշակին: Նվերն ընտրե-
լիս դիվանագետը նախ պետք է իաշվի առնի
միջոցառման առիթը, ինչպես նաև մթնոլորտը,
որի ժամանակ այն հանձնվում է հասցեատի-
րոջը: Ցանկալի է նախապես իմանալ այն
ստացողի նախասիրությունները: Թանկարժեք
նվերի ընտրություն կատարելը չի խրախուս-
վում, քանի որ այն կարող է անհարմար վիճա-
կում բողնել թե՛ նվեր ստացողին և թե՛ ներկա
գտնվողներին:

Պետք չէ մոռանալ, որ նվերը ուշադրութ-
յան նշան է, այլ ոչ պարտավորություն: Այն
պետք է ինքներդ գնեք և չվստահեք ուրիշին:

Ընդունված էրիկայի համաձայն՝ շատ
կարևոր է, որ նվերն ստացող անձը տվյալ պա-
հին ուշադրություն դարձնի դրա վրա և այն մի
կողմ չդնի: Ստանալուց հետո պետք է բացել և
շնորհակալություն հայտնել նվիրատուին: Նույ-
նիսկ, եթե ստացողին նվերը դուր չի գալիս
կամ, ինչպես ասում են, նրա սրտով չի լինում,
պետք չէ շփոթվել կամ ել դժգոհության նշաններ

ցույց տալ, այլ անհրաժեշտ է շնորհակալ լինել նվիրատուին, քանի որ երախտագիտություն հայտնելը ուշադրության նշան է այն մարդու հանդեպ, ով ցանկացել է հաճելին մատուցել:

Սովորաբար, եթե հրավերը կապված չէ ծննդյան տարեդարձի օրվա կամ հոբեյանական տարեթվի հետ, կարելի է գնալ առանց նվերի՝ բավարարվելով տանտիրուիու համար նախատեսված ծաղկե զամբյուղով կամ ել վարդերով: Տանտիրուիին ծաղիկները ընդունելիս պետք է անմիջապես դրանք տեղավորի ծաղկամանի մեջ: Շատ հարգի է նվիրատուի ծեռքով պատրաստած նվերը և այն ստացողը, իմանալով այդ մասին, կարող է կրկնակի շնորհակալություն հայտնել: Ընդունված չէ երբեք ստացած նվերը ետ ուղարկել, քանի որ նման վարքագիծը նվիրատուի հետ հարաբերությունները խգելու մտադրության նշան են:

Դիվանագիտական էթիկայի պրակտիկայում ընդունված է ինչ-որ առիթի կապակցությամբ զամբյուղով ծաղիկներ ուղարկել այն ուղարկողի այցեքարտով: Նման դեպքերում ստացողը պետք է անպայման իր երախտագի-

տուրքունը հայտնի հեռախոսով կամ էլ նամակի միջոցով։

ԱԱՆ-ում ու Եվրոպական շատ երկրներում գոյություն ունեցող սովորության համաձայն՝ դիվանագետների մոտ նույնպես ընդունված է հրավիրվելիս կոնֆետներ կամ հրուշակեղեն տանելը։

Դետաքրքրականն այն է, որ կոնֆետները ստանալուց հետո հյուրերին չեն հյուրասիրում, այլ դնում են մի կողմ՝ առաջնորդվելով «Նվերը նրանն է, ում հաճար բերում են» կարգախոսով։ Դայաստանի Դանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական շատ ներկայացուցությունների դեկավարներ ամանորի կապակցությամբ ուղարկում են միմյանց իրենց ազգային հրուշակեղենը կամ խմիչքները։

Ընդունված չէ նվերը փոխանցելու ժամանակ ասել. «Գիտեք, սա բավականին թանկ արժե» կամ «Կհավանեք, թե չէ Ձեր ճաշակով հարմար բան ընտրելը շատ դժվար էր»։ Չի կարելի տանել մի նվեր, որն առհասարակ պիտանի չէ։

Դիվանագիտական էթիկայի մեջ ընդունված է բացի ժաղիկներից, որպես պաշտոնական նվեր տանել գեղեցիկ ձևավորված գիրք, իսկ ամանորի առթիվ լավ գինի կամ օղի /ցանկալի է հայրենական արտադրության/, ազգային արվեստի ստեղծագործությունների մասին ալբոմ, երաժշտական սկավառակներ և այլն:

Դեսպանի վերջնական մեկնման կապակցությամբ նստավայր պետության արտաքին գործերի նախարարի անունից նրան հուշանվեր է մատուցվում: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնակազմում ավանդական է դարձել դեսպանի վերջնական մեկնման առիթով դիվանագիտական կորպուսի բոլոր անդամների անունից նրան արծաթյա ափսե նվիրելը: Ի դեպ, այդ հետաքրքիր մտահաղացման հեղինակը ՀՀ-ում Վրաստանի նախկին արտակարգ և լիազոր դեսպան, դիվանագիտական կորպուսի դուայեն Ն. Նիկոլովիշվիլին էր: Նրա մեկնումից հետո, ցավոք, այդ ավանդույթը խախտվեց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ - ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՍԴԻՊՈՒՄ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

Դեսպանընկալ երկրում դիվանագետները միշտ էլ օգտվում են բարձրակարգ ռեստորանների ծառայություններից, որտեղ նրանք ոչ միայն սնվում, այլև ունենում են գործնական ու բարեկամական հանդիպումներ։ Դիվանագետն իր գործընկերոջ հետ հանդիպելու ցանկության դեպքում նախապես տեղյակ է պահում ռեստորանի ղեկավարությանը այցելության օրվա, ժամի, նախընտրած սրահի /ծխողների և չժողների/ և մասնակիցների թվի մասին։ Կնոջ հետ ռեստորան մտնելիս դիվանագետը պետք է նրան առաջինը նախասրահ անցնելու հնարավորություն տա, ինտո մոտենալով հանդերձարանին՝ օգնի կնոջը հանելու վերարկուն

և որից հետո միայն ինքը հանի իր վերարկուն ու գլխարկը՝ հանձնելով հանդերձապահին: Նույն գործողությունը նա կատարում է ռեստորանից հեռանալիս: Եթիկայի նորմերի համաձայն՝ սանրվածքը կարելի է ուղղել միայն նախասրահում տեղադրված հայելու առջև, սակայն սանրվել, փողկապ կապել կամ օգտվել կոսմետիկայից, կարելի է միայն հարդարանքի սենյակում:

Ռեստորանի սրահ մտնելով՝ դիվանագետը մոտենում է իրեն հատկացված սեղանին, նախ օգնում կնոջը՝ նստելու, որից հետո միայն ինքը կարող է զբաղեցնել աթոռը: Ի դեպ, նստելիս հարկավոր է նեչքը հենել աթոռի թիկնակին, և եթիկային դեմ է, երբ նստում են աթոռի ծայրին, երկարում ոտքերը կամ ոտքը գցում ոտքին: Սովորաբար կնոջն ընկերակցելիս դիվանագետը պետք է զբաղեցնի կնոջ ծախ կողմի աթոռը կամ նստի նրա դիմաց, որը ավելի հարմար է զրուցելու համար:

Երբ դիվանագետը ռեստորան է մտնում մենակ, կարող է պատահել, որ ուղղվի դեպի

այն սեղանը, որտեղ նստած է որևէ միայնակ կին՝ ազատ նստատեղերի առկայությամբ, այդ դեպքում նա կնոջից պետք է աթոռն գբաղեցնելու քույլտվություն խնդրի՝ պատրաստ լինելով նաև մերժում ստանալու նրանից, քանի որ նման քայլը սովորաբար ծանոթություն հաստատելու նպատակ է հետապնդում: Ինչ վերաբերում է դիվանագետի իրավիճակում հայտնված կնոջը, երբ խնդրում է սեղանի շուրջ նստած տղամարդուն գբաղեցնելու նրա դիմացի ազատ աթոռը, ապա եթիկայի կանոնների համաձայն՝ վերջինս չպետք է մերժի կնոջ խնդրանքը:

Երբ ռեստորանում մատուցողը ներկայացնում է ճաշատեսակների ցանկը, ընտրությունն առաջինը կատարում է կինը, հետո միայն տղամարդը: Եթիկային դեմ է, երբ մատուցողին կանչում են բարձրածայն կամ առավել անընդունելի՝ բաժակին կամ շշին հարվածնելու միջոցով: Ի դեպ, այսօր այս հարցի լուծումը գտնված է օգտվում են սեղանին հարմարեցված զանգերից: Նատուցողը միշտ

պետք է ուշադիր լինի հյուրերի նկատմամբ և առաջին իսկ անհրաժեշտության դեպքում մոտենա հաճախորդներին։ Նրա վարքագծից է կախված նաև տվյալ հաստատության հեղինակությունը։

Ինչպիսի՝ տարրական էթիկայի նորմեր պետք է պահպանեն ռեստորանում։

Նախ՝ ընդունված չէ սեղանի շուրջ խոսել բարձրածայն։ անհրաժեշտ է պահպանել զրուցի հանգիստ տոն, ուտել և խմել անձայն, ճիշտ օգտագործել սպասքը, չսրբել դեմքն անձեռոցիկով, տաք կերակուրը չփչել ու չհոտութել սպասքը կամ կերակուրը, որն անվստահություն արտահայտելու նշան է։ Ռեստորանի սրահում ծանրթի հանդիպելիս պետք է բարեկել զուսակ՝ գլխի թերեւ շարժումով, առանց տեղից բարձրանալու։ Սակայն, երբ տարիքով ավագ կամ դիվանագիտական աստիճանով բարձր գործընկերոցն է հանդիպում, քաղաքավարությունը պահանջում է տեղից վեր կենալ և բարեկել նրան կանգնած ու նստել միայն նրա հեռանալուց հետո։ Դնարավոր է նաև, երբ ծա-

Նոթներից մեկին հրավիրում են սեղանակից լինելու, այդ պարագայում նրան նախ ժամոքացնում են սեղանի շուրջ նստած մյուս ներկաների հետ, ապա խնդրում մատուցողին սպասարկել նրան՝ համաձայն իր նախասիրությունների:

Շատ կարևոր է նաև ժառայությունների դիմաց հաշիվը ներկայացնելու և վճարելու եթիկայի նրբություններին տեսյակ լինելը: Այսօրվա չափանիշներով՝ հրավիրող կողմը մատուցողին է ներկայացնում իր բանկային քարտը, որն էլ աննկատ իրականացնում է վճարման բոլոր գործողությունները: Դրավիրված կողմը շնորհակալություն է հայտնում հրավիրողին լավ ժամանցի ու հյուրասիրության համար:

ՁԱՆԳԱՐԱՆՈՒՄ – ՊԱՏԿԵՐԱՄԱՐԱՀՈՒՄ

Ղեսպանընկալ Երկրում շատ հաճախ դիվանագիտական ներկայացուցչության անծնակազմի անդամները հրավերներ են ստանում մասնակցելու բանգարաններում կամ պատկերասրահներում կազմակերպվող ցուցահանդեսների պաշտոնական բացման արարողություններին: Ընդունված է, որ առաքելության դեկավարին դիմավորեն և ուղեկցեն ցուցասրահ: Նախապես որոշվում է նաև բացատրող թարգմանչի հարցը: Ցուցանմուշների կամ ներկայացված կտավների մասին ստանալով բացատրություններ՝ կարելի է նաև լրացուցիչ տելեկուրյուններ խնդրել դրանց վերաբերյալ, որոնք պետք է լինեն տեղին և քաղաքավարության սահմաններում: Ցուցասրահներում ուղեկցողի բացատրությունները լսելիս անհրաժեշտ է լուրջուն պահպանել, բարձրա-

ծայն չծիծաղել կամ չհազար: Բացատրությունները լսելիս պետք է լինել ուշադիր նույնիսկ այն ժամանակ, եթե ցուցանմուշներն այցելուին հետաքրքիր չեն: Տարրական վարվեցողությանը դեմ է, որ երբ ներկայացվում է արվեստի որևէ նմուշ կամ կտավ, այցելուն շրջվում կամ կենտրոնանում է մեկ այլ ցուցանմուշի վրա: Լինի թանգարանում կամ պատկերասրահում՝ ընդունված չէ ուղեկցողից առաջ անցնելով ծեռք տալ արվեստի գլուխգործոցին կամ չափից ավելի մոտ կանգնել ու նայել ցուցադրված նկարին: Նման վարքագիծը կարող է մյուս այցելուների մոտ այն կարծիքն ստեղծել, թե տվյալ անձը չունի արվեստի մասին տարրական իմացություն: Շատ հաճախ թանգարաններում ցուցադրվում են հազվագյուտ նմուշներ կամ արժեքավոր առարկաներ՝ «Լուսանկարելն արգելվում է» ցուցանակով: Այդ պարագայում անհրաժեշտ է ուշադիր լինել և հետևել պահանջվող կանոններին: Դարձալից վերաբերմունքի նշան է, երբ այցելուն հրաժեշտից առաջ թողնում է իր գրառումները «Տպավորությունների մատյան»-ում:

**«Երկու վիճաբանողներից ավելի մեղավորը նա է,
ով առավել խնդացի է»:
Ի Գյորե**

**«Խսկական քաղաքավարությունը մարդկանց
նկատմամբ ունեցած բարյացակամ
վերաբերնունքի մեջ է»:
Ժան-Ժակ Ռուստ**

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍԿՍՆՎԿ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԻՆ

Քաղաքավարությունը բարեկիրթ վար-
քագծի տարրական պահանջ է, որը ներառում
է նրբանկատություն և տակտ: Իրենց կարիե-
րայի ամբողջ ընթացքում դիվանագետները
պետք է ուշադրություն դարձնեն եթիկայի
հետևյալ նորմերին.

- Պահել արտաքին տեսքը /խնամքով սանրվածք, մաքուր թաշկինակ, տղամարդիկ սափրված, իսկ կանայք՝ չափավոր շպարված/:
- Չետևել կոշիկի մաքրությանը:
- Տաբատի ներքեկի մասով չմաքրել:
- Չետևել քայլվածքին /տղամարդ թե կին/. ոտքերն ու ձեռքերը միշտ լինեն համաչափ շարժման մեջ, քայլելիս չքափահարել ձեռքերը, քայլել ուղիղ, առանց կոանալու, անաղմուկ նստել աթոռին կամ բազկաթոռին, ուղիղ, ծնկները մոտ բերել, ոտքերը չտարածել, իսկ ոտքը ոտքին գցելիս տղամարդիկ ուշադրություն դարձնեն, որ չերևան մարմնի մերկ մասերը:
- Աթոռը բարձրացնել կամ տեղափոխել մինիայն մեջքի մասից բռնած:
- Փափուկ և հարմարավետ բազկաթոռին նստելիս կարելի է ոտքերը մի փոքր

ծգել միայն այն դեպքում, երբ նրանք ուրիշների չեն խանգարի:

- Անթույլատրելի է ոտքը ոտքի վրա գցել, երբ ձեր դիմաց նստած է տարիքով ավագ կամ դիվանագիտական աստիճանով բարձր անձնավորություն:
- Ընդունված չէ բազկարողին նստած բարեկել որևէ մեկին:
- Նստելիս կանայք պետք է ուշադրություն դարձնեն իրենց շրջազգեստի փեշերին, որոնք պետք է կիսով չափ ծածկեն ծնկները:
- Ուսերն առաջ չտանել և գլուխը ուսերի մեջ չպահել:
- Շրջապատում ձեռքերը գրպանների մեջ չդնել:
- Նստած՝ ոտքերը չշարժել Ենթագիտակցորեն կամ թխկացնել մյուս աթոռին:

- Աստիճաններով բարձրանալիս կամ իջնելիս երբեք նեկընդեջ չանել աստիճանահարթակները:
- Կնոջ հետ որևէ տեղ մտնելիս նախ պետք է թույլ տալ կնոջը՝ անցնելու դրոնով ներս, բացառությանք միայն այն դեպքերի, երբ շինությունը բավարար լուսավորված չէ:
- Վերելակից օգտվելիս նախ՝ պետք է տղամարդը մտնի, որից հետո՝ միայն կինը:
- Մութ աստիճաններով բարձրանալիս կամ իջնելիս տղամարդն է ճանապարհ հարթում:
- Չուշանալ ցանկացած ընդունելությունից:
- Դիվանագիտական ընդունելության ժամանակ անծանոթ հյուրերի հետ կարելի է ծանոթանալ միմիայն մինչև սեղանի շուրջ նստելը:

- Դարկ է հիշել, որ պաշտոնական ընդունելության ժամանակ դիվանագիտական աստիճանը որքան ցածր է, այնքան շուտ պետք է ներկայանալ և ավելի ուշ հեռանալ ընդունելության վայրից:
- Ինչպիսի ընդունելություն էլ որ լինի, խորհուրդ չի տրվում վեր կենալ տեղից և ձեռք տալ ցուցանմուշներին:
- Սեղանի շուրջ պետք է նստել միայն այն ժամանակ, երբ կանայք նստած են, և երբ տանտերն ու տանտիրուիին հրավիրում են բոլորին զբաղեցնել իրենց տեղերը:
- Երբ մատուցողը մոտենում է ձախից, նշանակում է նատուցելու է, իսկ աջից՝ հավաքելու է օգտագործված սպասքը:
- Արմունկներով չիենվել սեղանին:
- Անձեռոցիկը հարմարեցնել ոչ թե օձիքին կամ կրծքին, այլ դնել միմիայն ծնկներին:

- Մատուցումն ընդունված է սկսել կանցից:
- Խորհուրդ չի տրվում շատ մոտ կամ հեռու նստել սեղանից:
- Տղամարդու աջ կողմում նստած կինը կարիք ունի ուշադրության, և այդ ուշադրությունը պետք է լինի չափի սահմաններում:
- Դացը վերցնում են ձեռքով, դնում ափսեի մեջ և ամեն անգամ ուտելիս մի պատառ պոկում:
- Ապուր և արգանակ ուտելիս ընդունված չէ /եթե այն տաք է/ փչել կամ էլ վերջին գդալը խմել՝ ափսեն թեքելու միջոցով:
- Չուկ կամ թոշնի միս ուտելիս պետք է օգտվել միայն դանակից և պատառաքաղից:

- Դանակը բերանին մոտեցնելիս ներկա-ները կարող են խոր հիասթափություն ապրել նման վարքագծից:
- Դանակի օգնությամբ չի կարելի որևէ բան դնել պատառաքաղի վրա:
- Խույս տալ արագ ուտելուց և պատառաքաղով չվերցնել շատ ուտելիք: Ինչպես նաև չի կարելի շատ բան դնել բերանը և ժամել երկու կողմով:
- Պաշտոնական ընդունելությունների ժամանակ ընդունված չէ աջակողմյան հարևանի հետ գրուցելիս մեջքով դառնալ դեպի ծախակողմյան հարևանը:
- Երբեք չճգվել ուրիշի ափսեի վրայով՝ ինչ-որ բան վերցնելու համար:
- Ընդունելության կազմակերպիչների տրամադրության վրա կարող է բացասաբար անդրասդառնալ, երբ հրաժարվում են մատուցված ճաշատեսակից՝

պատճառաբանելով զանազան հիվանդությունները:

- Սեղանի շուրջ նստած ժամանակ ընդունված չէ հորանքել կամ բարձր հագալ, փոշտալ կողքինի վրա, կրծոտել եղունգները և կամ երկար նայել եղունգներին, կանգնած օրորվել այս ու այն կողմ:
- Բոլոր իրավիճակներում պահպանել ինքնատիրապետումը:
- Նյուրասիրվելիս չփորձել կարդալ նամակ կամ ինչ-որ թղթեր:
- Ընդունված չէ գրուցել սեղանի շուրջ նստած ինչ-որ մեկի հետ՝ շրջանցելով կողքինին:
- Կենաց առաջարկելիս և խմելիս քաղաքավարության դեմ է բաժակը դեմքից բարձր պահելը:

- Կողքի նստած անձին չխնդրել ինչ-որ բան փոխանցել սեղանից, երբ մոտակայքում մատուցողներ կան:
- Անքաղաքավարության նշան է, երբ եռեսը սրբում են անձեռոցիկով: Անձեռոցիկով սրբում են միմիայն շուրջերը:
- Կանայք չպետք է իրենց շրբներկի հետքը թողնեն բաժակի վրա:
- Պատառաքաղը կամ դանակը վայր գցելիս չշփոթվել. կարելի է խնդրել նոր՝ առանց ավելորդ ուշադրություն իրավիրելու, և չփորձել ինքնուրույն այն գետնից բարձարացնել:
- Ընդունված չէ սիրած ճաշատեսակը խնդրել երկրորդ անգամ:
- Բոլորի ներկայությամբ սեղանի շուրջ չօգտագործել ատամի մաքրիչ:
- Դեռու մնալ ալկոհոլային խմիչքի չարաշահումից:

- Եթե Զեզ մատուցած թեյը շատ տաք է, ապա այն չի կարելի սառեցնել փչելու օգնությամբ. Խմելիս գդալը անպայման պետք է հանել և դնել ափսեի մեջ:
- Եթիկային դեմ է թեյի կամ սուրճի երկրորդ բաժակը խնդրել այն դեպքում, երբ մյուսները ընդհանրապես չեն խմել:
- Միրգն ուտել միայն դանակի և պատառաքաղի օգնությամբ:
- Մրգի կորիզը հանել բերանից և շուրբերի օգնությամբ աննկատ թողնել պատառաքաղի վրա և որից հետո դնել միայն ափսեի մեջ:
- Փափուկ խմորեղենը ուտել միայն գդալով, իսկ չորը՝ ծեռքով:
- Երբեք չքննադատել սեղանին դրված կերակրատեսակը, հատկապես դիտողություններ անել կերակուրի համի կամ պատրաստման վերաբերյալ:

- Աշխատել սեղանի շուրջ չծխել, սակայն ցանկության դեպքում պետք է անպայման թույլտվություն հարցնել Զեր կողքին նստած տիկնոջից:
- Ափսեն կամ անձեռոցիկը չօգտագործել որպես մոխրաման:
- ճաշասեղանի վրա բջջային հեռախոս, բանալիներ, դրամապանակ կամ ձեռնոցներ չդնել:
- Ուտելն ավարտելուց հետո դանակն ու պատառաքաղը դնել ափսեի մեջ իրար զուգահեռ՝ պոչերն ուղղելով դեպի աջ. դա մատուցողին հուշում է ափսեից չօգտվելու մասին:
- Քաղաքավարության դեմ է ուտելուց հետո փովել աթոռի հենակին:
- Տանտերն ու տանտիրուհին չպետք է ճաշելն ավարտեն առաջինը, այլ սպասեն, մինչև որ հյուրերը վերջացնեն:

- Ընդունելությունների ժամանակ տանտերը կամ տանտիրուհին իյուրերի ներկայությամբ ցանկալի է, ի նշան հարգանքի, հեռախոսով երկար չգրուցեն:
- Դյուրերի ներկայությամբ տանտերն ու տանտիրուհին պետք չէ միմյանց դիտողություններ կամ կարգադրություններ անեն, քննադատեն կամ հրահանգներ տան:
- Ընդունված չէ սեղանի շուրջ անքաղաքավարի արտահայտություններ, գուեհիկ հումորներ անել, խոսել անհաջողություններից, ֆինանսական դժվար վիճակի, գիրությունից ազատվելու մասին:
- Երկար ու ընդգծված հայացքով չնայել ներկաներից որևէ մեկին, նամանավանդ կանանց, կանայք չպետք է զննեն միմյանց զգեստները կամ զարդերը:
- Ընդունելություններին ներկայանալիս կամ հրաժեշտ տալիս պարտադիր չէ

բոլոր ներկաներին ծեղսեղմումով ող-
ջունել կամ հրաժեշտ տալ: Դա պար-
տադիր է միայն տանտիրոց կամ տան-
տիրութու նկատմամբ, իսկ մյուս ներկա-
ներին՝ թերևակի խոնարհում: Մտերիմ-
ների հետ կարելի է գուսազ գրկախառն-
վել:

- Ընդունելությունն ավարտվելուց հետո
անհրաժեշտ է շնորհակալություն հայտ-
նել տանտիրոջն ու տանտիրութուն հա-
ճելի հանդիպման և հյուրասիրության
համար:
- Դիվանագետը միշտ պետք է լինի
գուսազ, ուշադիր ու քաղաքավարի
շրջապատի մարդկանց նկատմամբ:

ԳՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Л.К.Кондаленко,С.М.Симонова, Этикетная культура, Минск,1996 г.
2. В.И.Венедиктова,О деловой этике и этикете, Москва,1994 г .
3. В.И.Южин,Энциклопедия этикета, Москва, 2007 г.
4. Э.П. Кузьмин, Протокол и этикет дипломатического и делового общения, Москва, 1999 г.
5. А.Ф. Борунков, Дипломатический протокол в России и дипломатический этикет, Москва, 1993 г.
6. Э.Л.Кузьмин, Дипломатическое и деловое общение: Правила игры, Москва, 2005

7. Г.Н.Михалкевич, Этикет международного общения, учебное пособие, Минск, 2004 г.
8. Ф.Ф.Молочков, Дипломатический протокол и дипломатическая практика, Москва, 1979 г.
9. Н.И.Формановская, Речевой этикет и культура общения, Москва, 1969 г.
10. В.И.Попов, Современная дипломатия: теория и практика, Москва, 2003 г.
11. Энциклопедия этикета, Москва, 2004 г.
12. Ն. S. Չալթըմյան, Դիվանագիտական արքարդունակարգ և վարչելակերպ, Երևան, 2003 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Ղիմելածն	8
Խոսելու և լսելու էթիկան	13
Չետնել հեռախոսազրույցի էթիկային	21
Ինչ է այցեքարտը դիվանագետի համար ...	28
Բարենլ էթիկայի պահանջներին համապատասխան	35
Սգո պաշտոնական արարողությունների ժամանակ	44
Չագնվել էթիկայի կանոնների համաձայն	49
Յյուրընկավալվելու և իյուր ընդունելու էթիկան	59
Ինչպես դրսնորել իրեն քատրոնում կամ համերգասրահում	74
Նվերների փոխանակում	83

Գործնական և բարեկամական հանդիպում	
ռեստորանում	88
Թանգարանում և պատկերասրահում.....	93
Խորհուրդներ սկսնակ դիվանագետներին...	95
Գրականություն	108

ՆՈՒԹԱՐ ՏՐԴԱՏԻ ՉԱԼԵՄՅԱՆ

Դիվանագիրական
Վարչեցողության (Էրիկայի)
կանոնները

Նրատարակչության տնօրեն՝ Վ. ԱՍԻՍԵՅԱՆ
Խմբագիրներ՝ Ա. ՄԱԿԱՐՅԱՆ, Ա. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Դամակարգչային ծեսավորումը և կազմը՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Շարվածքը՝ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ
Տեխնիկական խմբագիր՝ Վ. ԽԱՎԱՏՐՅԱՆ



Պուշկինի 46

Հեռ. +374 (10) 53 96 47, +374 (91) 42 51 63

E-mail: lusabets@netsys.am

lusabets@mail.ru

www.lusabets.info.am

Տպագրված է «Լուսարաց հրատարակչական» տպարանում:
Տպարանակը՝ 500 օրինակ:

ՆՈՒԹԱՐ ՏՐԴԱԾԻ ԶԱԼԵՄՅԱՆ

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դոցենտ է, պատմական գիտուրյունների բնկածու: Ավարտել է մայր բուհի արևելագիտուրյան ֆակուլտետը, ունի արևելագիտ-արարագիտի դրական կավորում: Լուս է ընծայել միջարարական հարաբերություններին և հայ սփյուռքի խնդիրներին նվիրված «Սիրիա-իրաքյան հարաբերությունները 1961-1967 թթ.» (ուսումնական) և «Լիբանանի հայ համայնքը երկրի սոցիալ-գիտական և քաղաքական կյանքում» մենագրությունները: Գիտական աշխատանքներին զուգահեռ ն. Չալըմյանը խորհրդային գործիչներին որպես արարագիտ աշխատել է Մերժավոր Արևելքի և հյուսիսային Աֆրիկայի արարական մի շարք երկրներում:

Հայաստանի անկախությունից հետո՝ 1991-1992 թթ., աշխատել է նորաստեղծ արդարին գործերի նախարարությունում՝ ունենալով առաջին քարտուղարի դիվանագիտական աստիճան: 2003 թ. լուս են գետել ն. Չալըմյանի «Դիվանագիտական և հյուսպատուական ժառայություն և իրավունք» անդրանիկ հրապարակությունը և «Դիվանագիտական արարողակարգ և վարվելակերպ» բուհական չեղարկությունը, որոնք Հայաստանի Հանրապետությունում իրենց գետակի մեջ եղակի են: 1992-2009 թթ. Ն. Չալըմյանը պաշտոնավարել է «Հ-ում Շինասարանի դեսպանությունում:

